

ԼԵՂՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

ԲԱԺԻՆ 1

ՀԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Արցախի²⁵⁾ Հանրապետությունում շահութահարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է Արցախի²⁵⁾ Հանրապետությունում շահութահարկ վճարողների շրջանակը, շահութահարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը:

Հոդված 2. Շահութահարկի հասկացությունը

Շահութահարկը հարկ վճարողների կողմից սույն օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Հոդված 3. Շահութահարկի հաշվարկման ընդհանուր հիմքը

1. Շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե սույն օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկությունները:

2. Շահութահարկ վճարողները շահութահարկի հաշվարկի ներկայացնան ժամկետում հարկային պետական վարչության մարմնին գրավոր տեղեկացնում են իրենց ընտրած հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների սկզբունքների և կանոնների, ինչպես նաև դրանց փոփոխությունների մասին, եթե հարկատուին օրենքով կամ այլ իրավական ակտով վերապահված է նման ընտրության իրավունք:

3. Հարկվող շահույթը որոշելիս ակտիվները և պարտավորությունները հաշվի են արնվում սկզբնական (ծեռք բերման) արժեքով,²³⁾ բացառությամբ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքների²⁵⁾:

Սույն օրենքի կիրառման առումով օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքներ են համարվում ակտիվների և (կամ) պարտավորությունների վերագնահատուման արդյունքները, եթե վերագնահատումը կատարվել է այն օրենքին համապատասխան, որտեղ ուղղակիորեն նշված է, որ ակտիվների և (կամ) պարտավորությունների վերագնահատումն իրականացվում է հարկվող շահույթի կամ շահութահարկի հաշվարկման նպատակով:¹⁶⁾

4. Հարկվող շահույթը որոշելիս հաշվի են արնվում միայն սույն օրենքով սահմանված պահուստների (պահուստաֆոնների) ստեղծման հետևանքով առաջացող եկամուտները և նվազեցումները:²³⁾

ԳԼՈՒԽ II

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏԸ

Հոդված 4. Շահութահարկ վճարողները

1. Արցախի²⁵⁾ Հանրապետությունում շահութահարկ են վճարում (հարկատու են) Արցախի²⁵⁾ Հանրապետության ռեգիստրատուրա (այսուհետ՝ ռեգիստր) և ոչ ռեգիստրատուրա, բացառությամբ Արցախի²⁵⁾ Հանրապետության պետական կառավարչական իիմնարկների, Արցախի²⁵⁾ Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմնների, պետական ոչ առևտուրային կազմակերպությունների՝ բյուջե տային հատկացումների և ամրողությամբ բյուջե փոխանցվող եկամուտների մասով:²⁷⁾

2. Սույն օրենքի իմաստով՝

ա/ ռեգիենտ են համարվում Արցախի²⁵⁾ Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները, բացառությամբ սույն կետի «ք» ենթակետում նշված կազմակերպությունների առանձնացված ստորաբաժնումների.³⁾

բ/ ոչ ռեգիենտ են համարվում օտարերկրյա պետություններում, բացի Հայաստանի Հանրապետությունից, ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Արցախի²⁵⁾ Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները:³⁾

Հոդված 5. Հարկվող օբյեկտը

1. Ուեզիիենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Արցախի²⁵⁾ Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:

2. Ոչ ռեզիլիենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Արցախի²⁵⁾ Հանրապետության աղբյուրներից ստացվող (սույն օրենքի 51 հոդված) հարկվող շահույթը:

Հոդված 6. Հարկվող շահույթը

Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և սույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

ԳԼՈՒԽ III

ՀԱՄԱԽԱՐՆ ԵԿԱՄՈՒՏԸ

Հոդված 7. Համախառն եկամուտը

1. Համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Սույն օրենքի իմաստով՝

ա/ Եկամուտ է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը.

բ/ սեփական կապիտալ է համարվում ակտիվների և պարտավորությունների տարբերությունը.

գ/ ակտիվ է համարվում հարկատուին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած միջոց՝ գույքը (նյութական ակտիվները), գույքային իրավունքները և գույքային իրավունքների հետ կապված անձնական ոչ գույքային իրավունքները (ոչ նյութական ակտիվները), արտադիմությունը, արժեքորենը, դերիտորական պարտքը և այլ գույքը.

դ/ պարտավորություն է համարվում հարկատուի առկա պարտքը (Վարկ, կրեդիտորական պարտք, հարկային պարտավորություն և այլն):

2. Եկամուտների թվին են դասվում, մասնավորապես՝

ա/ ապրանքների, արտադրանքի (այսուհետ՝ նաև ապրանքներ) իրացումից ստացվող հասույթը.

բ/ ծառայությունների իրացումից ստացվող հասույթը.

գ/ հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացվող հասույթը.

դ/ փոխառության դիմաց ստացվող տոկոսները և այլ հատուցում (այսուհետ՝ տոկոսներ).

ե/ վարձակալության դիմաց ստացվող վճարները և այլ հատուցում (այսուհետ՝ վարձավճարներ).

զ/ գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման, կամ ցանկացած հեղինակային իրավունքից, արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից օգտվելու իրավունքի համար, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներն օգտագործելու կամ օգտվելու իրավունքի համար, կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հասուցումը (այսուհետ՝ ռոյալթի).

է/ շահաբաժնները.

ը/ ապահովագրական հատուցումները.

թ/ պարտքերի կամ առևտրային գործարքների ֆինանսավորման, ֆակտորինգային այլ գործառնությունների իրականացումից ստացվող եկամուտները.

ժ/ ֆյուչերների, օացիոնների և նման այլ գործարքներից ստացվող եկամուտները.

ժա/ անհատույց ստացվող ակտիվները, պարտավորությունների գեղչումից կամ ներումից ստացվող եկամուտները, բացառությամբ օրենքով տրվող հարկային արտոնությունների, պետական կամ համայնքային բյուջեների վճարվող այլ պարտադիր վճարների և տուրքերի, բնօգտագործման վճարների, ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող մասհանումների գծով տրվող արտոնությունների գումարների^{7), 15), 16)}.

ժի/ պատճառված վնասի (կրած կրոստի) հատուցումից ստացվող եկամուտները.

ժզ/ տուգների, տուգանքների և գույքային այլ սանկցիաների տեսքով եկամուտները.

ժր/ անվավեր ճանաչված գործադրներից ստացվող եկամուտները.

ԺԵ/ Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած կարգով դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները.

ԺԳ) Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած կարգով նախկինում դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարները կամ դուրս չգրված դեբիտորական պարտքերի մարման դեպքում՝ սահմանված կարգով պահուստին կատարված մասհանումների գումարները, իսկ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթերի շուկայի մասնագիտացված անձանց դեպքում՝ Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած կարգով նախկինում հաշվեկշռից դուրս գրված անհուսալի ակտիվների և ինվեստիցիոն արժեթերի հաշվեգրված եկամուտները, իսկ հաշվեկշռից դուրս չգրված ակտիվների դեպքում՝ սահմանված կարգով ծևավորված պահուստների նվազեցման գժով հաշվեգրված եկամուտները.¹⁶⁾

ԺԷ/ (ուժը կորցրած է ճանաչվել) ¹⁶⁾

ԺԸ/ Երաշխիքների տրամադրման, հիժարագրային (ակցեպտային) գործառնությունների գժով ստացվող եկամուտները.⁵⁾

ԺԹ/ Խավատարմագրային (լիազորագրային), կառավարման կամ ուրիշ ծևով այլ անձանց արժեթերները և ներդրումները կառավարելու, բրոքերային և ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ մատուցելու դիմաց ստացվող եկամուտները.

Ի/ մուրիհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթերների, վճարային փաստաթղթերի, քարտերի և այլ գործիքների թողարկման, գեղշման, գիշնան կամ սպասարկման դիմաց ստացվող եկամուտները.

ԻԱ) ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների, տեխնիկական պահուստներում վերապահովագրողի մասնաբանի գժով ճանաչվող եկամուտները.

ԻԲ) Վերապահովագրության փոխանացված պայմանագրերից ապահովագրական ընկերությունների ստացվող կոմիսիոն վարձատրությունները. ¹⁶⁾

ԻԳ) գույքագրման (այդ թվում՝ ստուգման) ժամանակ բացահայտված իհմնական միջոցների, ապրանքանությական արժեքների, դրամական միջոցների և այլ գույքի ավելցուկը, իսկ հարկատուի կողմից տիրագուրկ գույքի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով (բացառությամբ՝ դատարանի որոշումների հիման վրա) իր հրավունքների ճանաչման դեպքում՝ տիրագուրկ գույքը: Գույքի ավելցուկը, տիրագուրկ գույքը գնահատվում է տվյալ հարկատուի մոտ առկա համաման արժեքով, իսկ այդ արժեքի բացակայության դեպքում՝ փորձաքննության եղանակով որոշված արժեքով, որը ծևավորում է այդ գույքի սկզբնական (ծեռքբերման) արժեքը և համախառն եկամտի մեջ ներառվում է ամբողջությամբ տվյալ (գույքի ավելցուկի դեպքում՝ ավելցուկի հայտնաբերման, իսկ տիրագուրկ գույքի դեպքում՝ իրավունքների ճանաչման) հաշվետու ժամանակաշրջանում. ¹⁶⁾

3. Սույն օրենքի հմաստով՝ ցանկանաց դեբիտորական արտքերի հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է պահանջ ներկայացնելու օրվանից, բայց՝ գործադրի կատարմանը հաջորդող 61-րդ օրվանից ոչ ուշ:

4. Սահմանված կարգով պետության կամ լիազորված մարմնի կողմից հաստատված սակագների կիրառության հետ կապված՝ պետական բյուջեից տրվող սուբսիդիաների դեպքում հարկատուի եկամուտները որոշվում են նշված սակագների կիրառման արդյունքում՝ գնորդներից (սպառողներից) ստացման ենթակա գումարների (իրացումից հասույթի) և պետական բյուջեից փաստացի ստացված սուբսիդիաների (իրացումից հասույթի) հանրագումարի չափով: ¹⁶⁾

Հոդված 8. Եկամուտ չիամարվող տարրեր

Սույն օրենքի հմաստով՝ եկամուտ չեն համարվում մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից հարկատուի կանոնադրական կապիտալում (իհմնադրամում) կատարված ներդրումները, հարկատուի բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը, համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները:

Սույն օրենքի հմաստով՝ եկամուտ չի համարվում արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև օրենքով՝ սահմանված կարգով՝ ⁷⁾ իրականացված ակտիվների ¹⁶⁾ վերագնահատման դրական արդյունքը:

Սույն օրենքի հմաստով՝ եկամուտ չեն համարվում ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները) և ծառայությունները: ³⁾

Սույն օրենքի հմաստով՝ եկամուտ չեն համարվում օրենքով տրվող հարկային արտոնությունների, պետական կամ համայնքային բյուջեների վճարվող այլ պարտադիր վճարների և սուբքերի, բնօգուագործման վճարների, ավտոմորիալային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող մասհանումների գժով տրվող արտոնությունների գումարները: ^{7), 15), 16)}

Սույն օրենքի հմաստով՝ եկամուտ չեն համարվում հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող՝ պետական կամ համայնքային բյուջեից տրամադրվող գումարները: ²⁵⁾

ՀԱՄԱԽԱՐԱՆ ԵԿԱՄՏԻ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԸ

Հոդված 9. Համախարան Եկամտի նվազեցումները

Հարկվող շահույթը որոշելիս համախարան Եկամտից թույլատրվում է կատարել սույն գիտով նախատեսված նվազեցումները (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ): Նվազեցումների միևնույն գումարը համախարան Եկամտից հանվում է միայն մեկ անգամ:

Հոդված 10. Ծախսերը

1. Հարկվող շահույթը որոշելիս համախարան Եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով:

Սույն օրենքի իմաստով՝

ա/ ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման.

բ/ անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջնադաշտական և (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության և շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նախապատրաստման, յուրացման և կոնսերվացման, գույքի պահպանման, կադրերի պատրաստման համար հարկատուի կատարած ծախսերը, ինչպես նաև Եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը:

2. Ծախսերի թվին են դասվում, մասնավորապես՝

ա/ նյութական ծախսերը.

բ/ աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները.

գ/ (*ուժը կողցրած է ճանաչվել*)^{*10), *18)}

դ/ ամորտիզացիոն մասհանումները.

ե/ ապահովագրական վճարները.

զ/ չփոխառությունների հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները, ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումները (մասհանումները)^{*15)}.

է/ վարկերի և այլ փոխառությունների տոկոսները, բացառությամբ սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի «Ճ» կետով սահմանված դեպքի^{*15)}.

ը/ երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային^{*5)}, ապահովագրական^{*7)} ու վարկային կազմակերպությունների այլ^{*5)} ծառայությունների համար վճարները.

թ/ գովագդային ծախսերը.

ժ/ ներկայացուցական ծախսերը.

ժա/ գործուղման ծախսերը.

ժթ/ դատական ծախսերը.

ժգ/ պատճառված վնասի հատուցումը.

ժթ/ տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները, բացառությամբ սույն օրենքի 16 հոդվածի 1-ին կետի «Ճ» ենթակետով սահմանված դեպքերի.

ժե/ աշխատողների հավաքագրման ծախսերը.

ժգ/ առողջապահության, իրավաբանական, այլ խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը.

ժե/ ֆակտորիննագային, հավատարմագրային (լիազորագրային) գործառնությունների ծախսերը.

ժը/ (*ուժը կողցրած է ճանաչվել*)^{*16)}

ժթ/ հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերը:

3. Ապրանքանյութական պաշարների, աշխատանքների, ծառայությունների, հիմնական միջոցների և այլ ակտիվների ծեռք բերման (և համապատասխան դեպքերում այլ հարկատուների Եկամուտներին վերաբերող) փաստաթղթերի հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է Արցախի^{*25)} Հանրապետության կառավարությունը:

Հոդված 11. Ծախս չհամարվող տարրերը

Ծախս չեն համարվում՝

ա/ հարկատուի սեփական կապիտալի բաշխումը մասնակիցներին՝ շահաբաժնների կամ նման այլ ձևով.

բ/ այլ անձի կանոնադրական կապիտալում հարկատուի կատարած ներդրումները.

գ/ հարկատուի կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայտաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը.

ո/ արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով⁷⁾ իրականացված ակտիվների^{*18)} վերագնահատման բացասական արդյունքը.

Ե) ոչ առևտրային կազմակերպությունների անհատուց ստացված ակտիվների (այդ թվում՝ անդամագնարների) գծով ծախսերը կամ դրանց հաշվին կատարված ծախսերը.^{*3)}

զ) իհմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների լուծարման ծախսերը, ինչպես նաև լուծարվող իհմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները:^{*25)}

Հոդված 12. Ամորտիզացիոն մասհանումները

1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող և մաշվածի ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների անորտիզացիոն մասհանումների գումարի չափով՝ սույն հոդվածի 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերով սահմանված ժամկետներում:

2. Ամորտիզացիոն մասհանումների գումարը սույն հոդվածում սահմանված կարգով հաշվարկվում է՝ ելեկով իհմնական միջոցների տվյալ խմբի համար սահմանված ամորտիզացիոն հետևյալ նվազագույն ժամկետներից՝

ա/ շենքերի, շինությունների և անշարժ գույքի միավոր համարվող գծային ինժեներական ենթակառուցվածքների (հեկտահաղորդման և կապի համակարգերի (այդ թվում՝ օդային և ստորգետնյա մալուխային գծերի) և դրանց հենայունների, ջրարդիացման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, զագատարմների և ջերմանատակարարման համակարգերի, ուղղագույն համակարգերի, ջրամբարների)^{*25)} համար, բացառությամբ սույն կետի «բ» ենթակետում նշվածների

20 տարի

թ/ հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների^{*3)} շենքերի և շինությունների համար

10 տարի

թ/ արտադրական սարքավորումների համար՝

5 տարի^{*25)}

գ/ չնշված հոսքային գծերի, ռոբոտատեխնիկայի համար

3 տարի

դ/ հաշվողական և համակարգչային տեխնիկայի համար

1 տարի

ե/ այլ իհմնական միջոցների, այդ թվում՝ բանող անասունների, բազմամյա տնիկների և հողերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների համար

8^{*25)} տարի:

Պատերազմական գործողություններից տուժած գոտում գտնվող՝ սույն կետի «ա» և «բ» ենթակետերում նշված իհմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է մեկ տարի: Սույն մասում նշված՝ պատերազմական գործողություններից տուժած գոտու տարածքը սահմանում է Արցախի^{*25)} Հանրապետության կառավարությունը:

Մինչև 50 հազար դրամ արժողությամբ իհմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է մեկ տարի:^{*3)}

3. Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է հարկատուն՝ ելեկով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջիններիս որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի, սակայն ոչ ավելի հարկատուի գործունեության ժամկետից:

4. Հարկվող շահույթը որոշելու նպատակով հարկատուն իր հայեցողությամբ կարող է ընտրել իհմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն այլ ժամկետներ (այդ թվում՝ ինչպես տվյալ իհմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի համար առաջին անգամ ամորտիզացիոն մասհանում հաշվարկելու պահին, այնպես էլ դրանց հետո), սակայն իհմնական միջոցների տվյալ խմբի համար սույն հոդվածի 2-րդ մասով, իսկ ոչ նյութական ակտիվների համար՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետներից ոչ պակաս չափով: Սույն մասով սահմանված դեպքերում յուրաքանչյուր անգամ տվյալ իհմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի ամորտիզացիոն ժամկետը վերանայելուց հետո ամորտիզացիոն մասհանման գումարը հաշվարկվում է հաշվետու տարվա կտրվածքով (հաշվի արնելով նաև սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթները), որպես տվյալ իհմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի՝ մինչև ամորտիզացիոն ժամկետի վերանայումն առևկա հաշվեկշռային արժեքի և վերանայված ամորտիզացիոն ժամկետների հիմնա վրա հաշվարկված՝ ամորտիզացիոն մնացորդային ժամկետների հարաբերություն:^{*25)}

5. Ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես հիմնական միջոցի սկզբնական արժեքի, իսկ օրենքով սահմանված կարգով վերագնահատման իրականացման դեպքում վերագնահատված արժեքի և սույն հոդվածի 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերում հիմնական միջոցի տվյալ խմբի կամ ոչ նյութական ակտիվի համար սահմանված ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն:

Հոդված 13. Հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը

1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է՝

ա) հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով.

բ) վարձակալի մոտ՝ վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով:

2. Հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ավելացվում են այն հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին, որի վրա այդ ծախսերը կատարվել են, և՝

1) եթե այդ ծախսերը չեն գերազանցում հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրույթամբ հաշվեկշռային արժեքը, ապա ամորտիզացվում են սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով,

2) եթե այդ ծախսերը գերազանցում են հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրույթամբ հաշվեկշռային արժեքը, ապա ամորտիզացվում են սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան հինգ տարվա ընթացքում։ Եթե հիմնական միջոցի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանված է հինգ տարուց պակաս, ապա այդ հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացվում են այդ հիմնական միջոցի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետում։^{*)}

3. Վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը ամորտիզացվում են սույն օրենքի 12 հոդվածով սահմանված կարգով։ Վարձակալական պայմանագրի լուծման և փաստացի դադարեցման դեպքում չանորտիզացված մնացորդն չի նվազեցվում։^{*,**)}

4. Սույն օրենքի իմաստով հիմնական միջոցների (այդ թվում վարձակալված) վրա կատարված ծախսերի տարբերակումն ըստ ընթացիկ և կապիտալ ծախսերի կատարվում է Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած հայտանիշերի և (կամ) չափերի^{*)} հիման վրա։

Հոդված 14. Բնական պաշարների արդյունահաննան նախապատրաստական, երկրաբանական հետախուզման և նախագծահետախուզական աշխատանքների ծախսերը

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է բնական պաշարների արդյունահաննան նախապատրաստական, երկրաբանական հետախուզման և նախագծահետախուզական աշխատանքների վրա հարկատուի կատարած ծախսերի չափով՝ սույն օրենքի 12 հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով։

Հոդված 15. Գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական աշխատանքների ծախսերը

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա կատարված ծախսերի չափով՝ այդ ծախսերի կատարման տարվա ընթացքում ամբողջովին։ Սույն օրենքի իմաստով՝ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների դասակարգումը (հասկացությունը) սահմանում է Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարությունը։

Հոդված 16. Հարկման նպատակով համախառն եկամտից չնվազեցվող ծախսերը

1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից չեն նվազեցվում՝

ա/ վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած չափը գերազանցող վճարները, ինչպես նաև ծեռքբերված վառելիքի (քենզին, դիզելյային վառելիք, հեղուկ և բնական գազ) համար Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշված չափերը գերազանցող ծախսերը^{*)6)}.

բ/ Արցախի²⁵⁾ Հանրապետության տարածքից դուրս գովազի, մարդերին գալիք (ապրանքային և ծառայությունների շուկայի ուսումնասիրություն, ապրանքային և ծառայությունների շուկայում առաջնադաշտում),⁴⁾ կադերի պատրաստման և վերապատրաստման համար Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած չափը գերազանցող ծախսերը։

գ/ ^{*)4)} արտահագուստի և այլ հանդերձանքի, աշխատակիցներին՝ օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների համար Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած չափը գերազանցող ծախսերը։

դ/ Արցախի²⁵⁾ Հանրապետության տարածքից դուրս գործուղման ծախսերի, իսկ Արցախի²⁵⁾ Հանրապետության տարածքում օրապահիկի ծախսերի համար Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած չափը գերազանցող ծախսերը։

ե/ Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած չափը գերազանցող ներկայացուցական, խովանապորչական, խորհրդատվական²⁵⁾ և կառավարման ծառայությունների^{*)4),*)5)} ծախսերը։

գ/ առօդապահական հիմնարկների, ծերերի և հաշմանդամների տների, մանկական նախադպրոցական հիմնարկների, վերականգնողական ճամբարների, մշակութային, կրթական և մարզական հիմնարկների, ինչպես նաև բնակարանային ֆոնդի օբյեկտների պահպանման համար Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած չափը գերազանցող ծախսերը (այդ թվում՝ ամորտիզացիոն մասհանումները և նորոգման ծախսերը)։

ի/ պետական կամ համայնքների բյուջեներ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության^{*)10)}

ՎՃԱՐՆԵՐԻ ԴԻՄԱԳ ԳԱՆՁՎՈՂ ՏՈՒՄՔԵՐԸ, ՏՈՒՎԱՆՁՆԵՐԸ և ԱՅԼ ԳՈՒՔԱՅԻՆ ՍԱՆԿցիԱՆԵՐԸ, ԲԱԾԻ ՔԱղաքացիահրաՎական պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար գանձվողներից.

ը/ անհատույց տրամադրած ակտիվները, մատուցված ծառայությունները²⁷⁾, ներված պարտավորությունները, բացառությամբ սույն օրենքի 23 հոդվածում նախատեսված դեպքի²⁸⁾.

թ/ միավորումներին և արտագերատեսչական կառավարման այլ կառուցներին տրամադրված հատկացումները.

ժ/ սպասարկող տնտեսությունների պահպանման ծախսերը (շինությունների անվճար տրամադրում, հանրային սննդի ծեռարկություններին կոմունալ ծառայությունների արժեքի վճարում).

Ժ/ հարկատուի կողմից արտադրանքի արտադրությանը չառնվող ծառայությունների (քաղաքների կամ այլ բնակավայրերի բարեկարգման աշխատանքներ, գյուղատնտեսական աշխատանքներին օժանդակություն և այլն) մատուցման կամ դրանց դիմաց կատարվող ծախսերը:

ԺԲ) այն եկամուտների ստացման հետ կապված ծախսերը, որոնք միաժամանակ նվազեցվում են համախառն եկամտից:²⁹⁾

ԺԳ) Վարկերի և փոխառության դիմաց վճարվող տոկոսների՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային սույնություն հաշվարկային դրույթի կրկնակի չափը գերազանցող մասը:³⁰⁾

ԺԴ) բանկ կամ վարկային կազմակերպություն չհամարվող սուբյեկտների կողմից վերցված (ներգրավված) վարկերի կամ փոխառությունների գումարների նկատմամբ հաշվարկվող տոկոսները, եթե դրանք անտոկոս տրամադրվում են այլ անձանց, կամ հարկատուի կողմից վարձակալությամբ վերցված ոչ ընթացիկ ակտիվների գծով հաշվարկվող վարձավճարները, եթե դրանք անհատույց օգտագործմամբ տրամադրվում են այլ անձանց.

ԺԵ) բանկ կամ վարկային կազմակերպություն չհամարվող սուբյեկտների կողմից վերցված (ներգրավված) վարկերի կամ փոխառությունների գումարների նկատմամբ հաշվարկվող տոկոսների այն մասը, որը գերազանցում է այդ միջոցների հաշվին այլ անձանց տրամադրմանը և անհատույց օգտագործմամբ տրամադրվում են այլ անձանց.

ԺԳ) բանկ և վարկային կազմակերպություն չհամարվող սուբյեկտներից ներգրավված փոխառությունների գծով հաշվետու տարվա ընթացքում հաշվարկվող տոկոսների գումարների այն մասը, որը հաշվետու տարվա արդյունքներով գերազանցում է՝

- շահութահարկ վճարողի (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների)՝ հաշվետու տարվա վերջին օրվա դրությամբ առկա սեփական կապիտալի դրական մեծության կրկնապատիկը.

- բանկ կամ վարկային կազմակերպություն համարվող շահութահարկ վճարողի՝ հաշվետու տարվա վերջին օրվա դրությամբ առկա սեփական կապիտալի դրական մեծության իննապատիկը:²⁵⁾

2. Եթե Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության կողմից սույն հոդվածի 1-ին կետի «ա» - «զ» ենթակետերով նախատեսված ծախսերի համար նվազեցման թույլատրելի չափը չի սահմանվում, ապա համախառն եկամուտը նվազեցվում է փաստացի կատարված ծախսերի ողջ գումարի չափով:

Հոդված 17. Անվավեր ճանաչված գործարքների հետևանքով առաջացած ծախսերը

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործարքն անվավեր ճանաչելու հետևանքով գործարքի մյուս կողմին վերադարձվող միջոցների գումարի չափով:

Հոդված 18. Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման եւ նախկինում դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարները

1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ պահուստաֆոնդին կատարվող մասհանումների, իսկ այդ պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստաֆոնդին կատարված մասհանումները գերազանցող գումարի չափով:⁴⁾

2. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած կարգով նախկինում դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարների չափով:

Հոդված 19. Փաստաթղթերով չիհմնավորված ծախսերը

1. Հարկվող շահույթը որոշելիս առանց հիմնավորող փաստաթղթերի համախառն եկամուտը նվազեցվում է՝

1) Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած չափը չգերազանցող օրապահիկի, ինչպես նաև դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքների կատարման դեպքում՝ հատուցման գումարների չափով.

2) Արցախի²⁵⁾ Հանրապետության տարածքում փաստաթղթերով չիհմնավորված այն ծախսերի չափով,

որոնց համար հարկային մարմիններին «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 28⁴-րդ հոդվածով սահմանված կարգով, ծևով և ժամկետներում ներկայացվել են տեղեկություններ (այդ թվում՝ հաշվարկային փաստաթղթերում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով կատարված գործադրի մասով), և այդ տեղեկությունների հավաստիությունը հարկային մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով հիմնավորվել է՝ դրա վերաբերյալ հարկային մարմիններից գրավոր տեղեկատվություն ստանալու հաշվետու ժամանակաշրջանում:»¹²⁾

2. (հանգել է) ²⁾

Հոդված 20. (ուժը կորցրած է ճանաչվել) ¹⁶⁾

Հոդված 21. Բնական և այլ կորուստները

1. Հարկվող շահույթը որոշելիս համախառը եկամուտը նվազեցվում է գույքի՝ Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշված չափը չգերազանցող՝ փաստաթղթերով հիմնավորված բնական կամ փաստացի այլ կորուստների չափով՝ դրանց տեղի ունենալու կամ հայտնաբերվելու տարվա ընթացքում, եթե Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության կողմից սահմանված է այդպիսի չափ:

2. Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշված բնական կամ փաստացի այլ կորուստների չափեր սահմանված չինելու կամ դրանք գերազանցող՝³⁾ կորստի դեպքում համախառը եկամուտը նվազեցվում է այդ կորստի չափով՝

ա/ վնաս պատճառողի կողմից կորուստն ամբողջությամբ կամ մաս-մաս կամովին հատուցվելու դեպքում կորստի ամբողջական կամ մաս-մաս հատուցման տարում կամ՝

բ/ վնաս պատճառած անձին չպարզելու հետևանքով նախարնության մարմնի կողմից՝ քրեական գործը կասեցնելու կամ կարծելու մասին որոշում ընդունվելու դեպքում վերջինիս ընդունման տարում կամ՝

գ/ անձին մեղավոր կամ անմեղ ձանաչելու դատավճիր կայացնելու դեպքում վերջինիս ուժի մեջ մտնելու տարում:

Հոդված 22. Պատահական կորուստները

1. Հարկվող շահույթը որոշելիս համախառը եկամուտը նվազեցվում է գույքի պատահական կորուստների չափով՝ դրանց տեղի ունենալու կամ հայտնաբերվելու տարվա ընթացքում:

2. Սույն օրենքի իմաստով՝ պատահական կորուստ են համարվում հարկատուի գույքի փաստաթղթերով հիմնավորված փաստացի կորուստը, ոչնչացումը, վնասումը կամ որակական հատկանիշների անկումը, որը տեղի է ունենում իրդեհի, ջրհեղեղի, երկրաշարժի կամ այլ տարերային աղետի, նավաբեկման, պատերազմի, մարտական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ապստամբության կամ նման այլ արտակարգ իրադարձությունների (ներառյալ՝ օրենքով սահմանված ապահովագրական պատահարները) հետևանքով:

Հոդված 23. Բարեգործական և այլ անհատույց հատկացումները

Հարկվող շահույթը որոշելիս համախառը եկամուտը նվազեցվում է՝

ա/ ոչ առևտրային կազմակերպություններին, գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօրիներին, ժերանցներին և մանկատներին,³⁾ ինչպես նաև հոգեբուժական և հակառօքախտային դիսպանսերներին և հիվանդանոցներին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք և (կամ) դրանական միջոցներ), նրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով, բայց ոչ ապելի, քանի համախառը եկամտի 0.25 տոկոսի չափով.

բ/ (ուժը կորցրած է ճանաչվել) ³⁾

Հոդված 23¹. (դադարել է գործել 2011 թվականի հունվարի 1-ից) ¹³⁾

Հոդված 24. Անհատույց ստացված ակտիվները

1. Սույն օրենքի իմաստով անհատույց ստացված ակտիվները (բացառությամբ՝ դրամական միջոցների և հողամասերի) եկամուտ են համարվում այն հաշվետու տարում, եթե դրանք ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառը եկամտից նվազեցնելու հանգամանքից:

2. Սույն օրենքի իմաստով դրամական միջոցները եկամուտ են համարվում դրանց ստացման հաշվետու տարում, բացառությամբ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ստացված նպատակային դրամական միջոցների, որոնք եկամուտ են համարվում այն հաշվետու տարում, եթե այդ դրամական միջոցները կամ այդ դրամական միջոցներով ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս՝ անկախ այդ ծախսը համախառը եկամտից նվազեցնելու հանգամանքից: Պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում որպես արդեն իսկ կատարված ծախսերի կամ ստացված վնասների փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում դրանց ստացման հաշվետու տարում:

3. Սույն օրենքի իմաստով հողամասերը եկամուտ են համարվում տաք հաշվետու տարիների

ընթացքում, ներառյալ՝ դրանց ստացման հաշվետու տարին՝ յուրաքանչյուր հաշվետու տարում հավասարաչափ: Եթե սույն մասով սահմանված ժամանակահատվածում անհատույց ստացված հողամասն օտարպում է, ապա հողամասի արժեքի՝ դեռևս եկամուտ չհամարված մասը եկամուտ է համարվում հողամասի օտարման հաշվետու տարում:

Սույն հողվածի դրույթները կիրառվում են նաև դատարանի որոշումների հիման վրա տիրագույք ճանաչված ակտիվի սեփականության իրավունքի ճանաչման դեպքերում^{16), 25)}

Հոդված 25. Հարկատուի գործունեությունից վնասները

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի՝ նախորդ տարիներին ունեցած վնասների չափով, բացառությամբ կազմակերպությունների միացման, միաձուլման և վերակազմավորման ծնով վերակազմակերպման դեպքերի:¹⁷⁾ Հարկատուի գործունեությունից վնասը սույն օրենքով սահմանված նվազեցումների գերազանցումն է համախառն եկամտի նկատմամբ:

2. Սույն նվազեցման կիրառման նպատակով հաշվետու և նախորդող տարիներին հարկատուի գործունեությունից վնաս ունենալու դեպքում այն փոխանցվում է վնասի ստացման տարկան հաջորդող 3 տարիներ^{18), 19).}

Հոդված 26. Շահաբաժնները

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի ստացած շահաբաժնների գումարի չափով, բացառությամբ սույն օրենքի 54 հողվածի 2-րդ կետով սահմանված դեպքի:

Սույն օրենքի իմաստով՝ շահաբաժնի է համարվում այլ իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում կամ իրավաբանական անձի կարգավիճակ չընեցող ձեռնարկությունում մասնակցությունից (բաժնետոմսից, բաժնենասից, փայաբաժնից) ստացված եկամուտը:

Հոդված 27. Հետ գնված մասնակցության իրացումը

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնենասերի կամ փայաբաժնների իրացման և հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով, եթե տվյալ բաժնետոմսերը, բաժնենասերը կամ փայաբաժնները հետ են գնվել օրենքի պահանջի ուժին:

Հոդված 28. Լուծարվող իրավաբանական անձից ստացված մնացորդային գույքը

Իրավաբանական անձի լուծարման դեպքում հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի բաժնետոմսերի (փայերի) դիմաց ստացված մնացորդային գույքի գումարի և բաժնենասի հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով:

Հոդված 29. Հարկման նպատակով բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց ակտիվների և (կամ) ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստներին ուղղած գումարների չափով՝ Արցախի²⁵⁾ Համրապետության կառավարության սահմանած կարգով.

թ/ հաճախորդների բանկային ավանդների և ներգրավված փոխառությունների¹⁵⁾ վրա հաշվեգրված տոկոսների չափով.

գ/ բանկի և վարկային կազմակերպությամ¹⁵⁾ պարտքի հանձնառության (պարտատոմսերի, նեպողիտային և ավանդային հավաստագրերի, ներառյալ՝ մուրհակները) գույք հաշվեգրված տոկոսների, այդ թվում պարտքի հանձնառության արժեթղթերի իրացման գների և դրանց անվանական արժեքների բացասական տարբերության (դիսկոնտ) գումարների չափով.

դ/ ծառայությունների և թղթակցային հարաբերությունների դիմաց բանկի և վարկային կազմակերպությամ¹⁵⁾ վճարած միջնորդական վճարների, այդ թվում՝ հաճախորդների հաշվարկային-դրամարկային սպասարկման, նրանց հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվների վարման ծախսերի, մյուս բանկերին հաշվարկային-դրամարկային սպասարկման դիմաց վճարի և համանման այլ ծախսերի չափով.

ե/ կանխիկ դրամի, չեկերի, վճարային այլ փաստաթղթերի տեղափոխման (ինկասացիա) դիմաց, ինչպես նաև արժեքների փաթեթավորման, այդ թվում՝ կանխիկ դրամի համալրման, բանկին և վարկային կազմակերպությանը և նրանց¹⁵⁾ հաճախորդներին պատկանող արժեքների տեղափոխման, պահպանման և առաքման ծախսերի չափով.

զ/ հաշվարկադրամարկային և հաշվողական կենտրոնների ծառայությունների վճարումների չափով.
է/ բանկի և վարկային կազմակերպությամ¹⁵⁾ գործունեություն ապահովելու համար անհրաժեշտ

ՎՃԱՐԱՅԻՆ ՄԻՉՈՂՄԵՐ (ԱԼԱՍՏԻԿԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ, ՃԱՆԱՊԱՐԻԱՅԻՆ ՀԵԿԵՐ և ԱՅԼ) ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ, ԹՈՂԱՐԿԵԼՈՒ, Ի ՊԱՀ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ և ՆԵՐԴՆԵԼՈՒ ԻԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՓՈՎ.

ը/ Բաժնետոնմեր, պարտատոնմեր, ավանդային հավաստագրեր (սերտիֆիկատներ), պարտքի այլ հանձնառություններ և ֆինանսական շուկայում շրջանառության մեջ գտնվող այլ արժեթղթեր թողարկելու իետ կապված ծախսերի (թողարկման ազդագրերի նախապատրաստման, արժեթղթերի ձևաթղթերի ծեռքբերման, տպագրման ծախսեր, արժեթղթերի տպարածման դիմաց միջնորդական վարձատրությունների վճարումներ և այլն) չափով.

թ/ Կերծ թղթադրամների և վճարային փաստաթղթերի պատճառով բանկի և վարկային կազմակերպության⁵⁾ կրած կորուստների չափով.

Ժ/ Բանկի և վարկային կազմակերպության կողմից պարտապան գինծառայողների՝ հաշվեկշռում և (կամ) հետհաշվեկշռում հաշվառվող վարկերի և դերհտորական պարտքերի գծով հաշվեգրված և չվճարված սուկուսները, սույժերը և տուգանքները (կամ դրանց մի մասը) գիշելու (կամ ներելու) դեպքում՝ այդ գումարների (կամ դրանց մի մասի) չափով:²⁰⁾

Ժա/ Բանկի և վարկային կազմակերպության կողմից պարտապան իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ հաշվեկշռում և (կամ) հետհաշվեկշռում հաշվառվող վարկերի և դերհտորական պարտքերի գծով հաշվեգրված և չվճարված սուկուսները, սույժերը և տուգանքները (կամ դրանց մի մասը) 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը²⁵⁾ ներառյալ գիշելու (կամ ներելու) դեպքում՝ այդ գումարների (կամ դրանց մի մասի) չափով:²³⁾

Հոդված 30. Հարկման նպատակով ապահովագրական ընկերությունների համախառն եկամտի նվազեցումները

Հարկման նպատակով ապահովագրական ընկերությունների համախառն եկամուտը, ի լրումն սույն օրենքի 10-28 հոդվածներով սահմանված նվազեցումների, նվազեցվում է նաև՝

ա/ ապահովագրական (Վերաապահովագրական) հատուցումների վճարումների չափով.

թ/ Վերաապահովագրությանը փոխանցված որևէ որևէ գծով հաշվեգրված վերաապահովագրականների չափով:¹²⁾

զ/ Կանխարգելիչ միջոցառումների պահուատների մասհանումների, ապահովագրողներին կամ ապահովադիմներին պատկանող արժեքների տեղափոխման, պահպանման կամ առաքման ծախսերի չափով.

դ/ (ուժը կորցրած է ճանաչվել)՝¹⁶⁾

ե/ ապահովագրական գործակալներին և բրոքերներին վճարվող¹⁶⁾ կոմիսիոն վարձատրության չափով.

զ/ հաշվարկադրամարկղային և հաշվողական կենտրոնների ծառայությունների վճարումների չափով.

է/ ապահովագրական ընկերությունների գործունեության ապահովման համար անհրաժեշտ վճարային միջոցների (Ճանապարհային չեկեր, պլաստիկ քարտեր և այլն) պատրաստման, թողարկման, ի պահ ընդունման և ներդրման իետ կապված ծախսերի չափով:

ը/ Կյանքի ապահովագրության գծով (ներառյալ՝ կենսաթոշակային ապահովագրության) կուտակային հաշիվներին հաշվեգրված և (կամ) վճարված սուկուսային ծախսերի չափով,

թ/ ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների, տեխնիկական պահուստներում վերաապահովողի մասնաբաժնի գծով ճանաչված ծախսերի չափով:^{12), 16)}

Հոդված 31. Համախառն եկամտից ծախսերի գծով նվազեցումների իրականացումը

1. Արտադրանքի արտադրության և ծառայությունների մատուցման իետ ամմիջականորեն կապված ծախսերի (նյութական, աշխատանքի վարձատրության, սոցիալական ապահովության¹⁰⁾ և այլն) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են տվյալ արտադրանքի և ծառայությունների իրացման համապատասխան:

2. Արտադրական գործունեություն իրականացնող հարկատուների՝ ապրանքների ծեռքբերման արժեքի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այդ ապրանքների իրացման համապատասխան:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով չնախատեսված ակտիվների (հիմնական միջոցների և այլ ակտիվների) մնացորդային արժեքի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են դրանց իրացման համապատասխան:

4. Հարկատուի գործունեության իետ կապված վարչական ծախսերի (կառավարման ապարատի աշխատավարձ, սոցիալական ապահովություն,¹⁰⁾ գործուղումներ, նյութական և տրանսպորտային սպասարկում, կառավարման տեխնիկական միջոցների և վարչական նշանակության հիմնական միջոցների պահպանում և շահագործում, ներկայացուցական, դատական, առողջապահական, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ, կարդերի պատրաստում և վերաապատրաստում և այլն), արտադրանքի և ծառայությունների իրացման իետ կապված ծախսերի (փաթեթավորում, պահպանում, բեռնում, տեղափոխում, ուղեկցում, գովազդ, մարքեթինգ և այլն) և ոչ արտադրական այլ ծախսերի (գյուտարարական և նորարարական, գիտահետազոտական, նախագծային և փորձակողնստորական աշխատանքների և այլն) չափով համա-

խարն Եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են:

5. Հարկատուի ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերի (վարկերի և այլ փոխառությունների տոկոսներ, գույքի երկարատև վարձակալության դիմաց տոկոսներ և այլն) չափով համախառն Եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված այն դեպքերի, եթե դրանք ներառվում են ակտիվի սկզբնական (ձեռքբերման) արժեքի մեջ⁽¹⁶⁾:

6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում նշված ծախսերի գծով նվազեցումները կատարվում են նաև համախառն Եկամտի բացակայության դեպքում:⁽¹⁷⁾

ԳԼՈՒԽ V

ԾԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՎԱՓԵՐԸ

Հոդված 32. Ոեզիդենտների շահութահարկի դրույքաչափերը

1. Բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված գործունեության տեսակների, շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով:

2. Վարկային կազմակերպությունների, բանկերի, ապահովագրական ընկերությունների, ⁽²²⁾ արժեթղթերի շուկայի մասմագիտացված անձանց, գրավատների, արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիերային-բրոքերային առք ու վաճառքի, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության (վերամշակման), վառելիքաներգեսիկ հումքի արդյունահանման և (կամ) արտադրության (վերամշակման) գործունեություն իրականացնող անձանց, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում⁽²⁵⁾ լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց՝ գործունեության այդ մասով ստացած եկամուտների, ինչպես նաև ստացվող այլ եկամուտների դիմաց շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ 20 տոկոս դրույքաչափով:^{(17), (22), (3), (8), (12), (16)}

Հոդված 33. Շահութահարկին փոխարինող վճարները

Առանձին վճարողների, նրանց խմբերի, գործունեության տեսակների համար օրենքով կարող են սահմանվել շահութահարկին փոխարինող առևտոր հարկ կամ հաստատագրված վճարներ:⁽¹⁶⁾

Հոդված 34. (ուժը կորցրած է ձանաչվել) ⁽³⁾

Հոդված 34¹. Շահութահարկի տարբեր դրույքաչափերով հարկումը

Շահութահարկի տարբեր դրույքաչափերով (այդ թվում՝ շահութահարկին փոխարինող առևտոր հարկով կամ հաստատագրված վճարներով⁽¹⁶⁾) հարկվող գործունեության տեսակներ իրականացնող հարկատուն շահութահարկը վճարում է գործունեության յուրաքանչյուր տեսակի համար սահմանված առանձին դրույքաչափով: Այդ նպատակով հարկատուն վարում է եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում ըստ գործունեության առանձին տեսակների:⁽⁵⁾

ԳԼՈՒԽ VI

ԾԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 35. Գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտը

1. Շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուններ՝ իրենց կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:

2. Սույն հոդվածի իմաստով՝ գյուղատնտեսական արտադրանք են համարվում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող՝

- հացահատիկային և հացահատիկալորային մշակաբույսերը.
- տեխնիկական մշակաբույսերը.
- պալարապտույթին, բանջարային, բռստանային մշակաբույսերը և փակ գրունտի արտադրանքը.
- դաշտային մշակման կերային մշակաբույսերը.
- կերարտադրության այլ արտադրանքը.
- պարտեզների, խաղողի այգիների, բազմամյա տնկիների և ծաղկաբուծության արտադրանքը.
- ծառերի և թփերի սերմերը, պտուղներում եղած սերմերը.

- ծառերի և թփերի սածիլները.
 - ծառերի և թփերի տնկիները.
 - անասնաբուծության արտադրանքը.
 - խոզաբուծության արտադրանքը.
 - ոչխարաբուծության և այժմաբուծության արտադրանքը.
 - թռչնաբուծության արտադրանքը.
 - ձիաբուծության, իշաբուծության և ջորեբուծության արտադրանքը.
 - եղջերվաբուծության և ուղտաբուծության արտադրանքը.
 - ձագարաբուծության, մորթատու գազանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանքը.
 - ձկնաբուծության, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանքը:
3. Գյուղատնտեսական արտադրանքի գծով ստացված եկամտի ճշգրիտ հաշվարկման անհնարինության դեպքում այն հաշվարկվում է՝ հիմնվելով *Արցախի²⁵⁾* Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված կադաստրային գուտ եկամտի տվյալների վրա:
4. (ուժը կորցրած է ձանաչվել) ⁽³⁾

Հոդված 35.1. Ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամուտը

Հահութահարկի վճարումից ազատվում են ձեռագործ գորգերի արտադրությամբ գրադադար հարկատունները՝ իրենց կողմից ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամտի մասով:⁽¹⁷⁾

Հոդված 36. (ուժը կորցրած է ձանաչվել) ⁽³⁾

Հոդված 37. Հաշմանդամներին տրվող վճարումները

Հարկատուի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150 տոկոսի չափով:

Հոդված 37.1. Աշկերտին տրվող վճարումները

Հարկատուի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է (աշկերտության պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում) հարկատուի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150 տոկոսի չափով:⁽²¹⁾

Հոդված 38. Ներդրում ունեցող ռեզիդենտի արտոնությունները

1. Եթե ռեզիդենտի (բացառությամբ սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի 20 տոկոս դրույքավախով հարկվող գործունեություն իրականացնողների, ինչպես նաև վերակազմակերպված կազմակերպությունների) կանոնադրական կապիտալում *Արցախի²⁵⁾* Հանրապետության կառավարության կողմից ծևավորված ներդրումները գնահատող և արտոնություն տրամադրող հանձնաժողովին հայտ ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում հիմնադրի (մասնակցի) փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը կազմում է առնվազն 100 միլիոն ՀՀ դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝ հայտ ներկայացնելու տարում և դրան հաջորդող երկու տարիներին 100 տոկոսի չափով, հետագա երկու տարիներին՝ 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան ներդրման ընդհանուր արժեքի 10 տոկոսը:^{(5), (12), (16), (24)}

Սույն մասով⁽¹²⁾ սահմանված արտոնության ժամկետում՝ հարկատուի լուծարման դեպքում շահութահարկի գումարն այդ արտոնության ժամանակաշրջանի համար հաշվարկվում է լրիվ չափով՝ գործունեության ամբողջ ժամանակաշրջանի համար:⁽¹⁾

Սույն հոդվածի կիրառման նպատակով:

ա) ներդրում է համարվում հարկատուի կանոնադրական կապիտալի ծևավորմանը և համալրմանն ուղղված ակտիվների ներդրումը,⁽¹²⁾ ինչպես նաև պետական գույքի սեփականաշնորհումը (մասնավորեցումը).

բ) գույքային ներդրումները ենթակա են պետական գրանցման և (կամ) նոտարական վավերացման օրենքով սահմանված կարգով:

Սույն հոդվածով նախատեսված արտոնությունը տարածվում է միայն այն ներդրումների վրա, որոնք ուղղվում են արտադրական բնույթի հիմնական միջոցների ներքբերմանը (կառուցմանը):^{(4), (12), (24)}

Սույն հոդվածով նախատեսված ներդրումների գնահատման, արտոնության տրամադրման և կիրառման կարգը սահմանվում է *Արցախի²⁵⁾* Հանրապետության կառավարության կողմից:⁽¹²⁾

Սույն հոդվածով նախատեսված արտոնությունը կիրավում է միայն մեկ անգամ:⁽²⁴⁾

2. Մինչև 1998 թվականի հունվարի 1-ը օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններին և բանկերին շահութահարկի գծով օրենքով կամ այլ իրավական ակտով արտոնություններ տրված լինելու դեպքում մինչև տվյալ օրենքով կամ այլ իրավական ակտով դրանց համար սահմանված ժամկետի ավարտը

հարկատուն, իր հայեցողությամբ, հարկային պետական վարչության մարմիններ ներկայացվող հայտարարության հիման վրա, կարող է օգտվել սույն հոդվածի 1-ին կետով սահմանված արտոնությունից:

Հոդված 39. (ուժը կորցրած է ճանաչվել) ^{*3)}

Հոդված 39¹. Մինչև 2009 թվականի^{*9)} հունվարի 1-ը իրականացված՝ խմելու^{*12)} ջրի մատակարարման, կեղտացրելի հեռացման և մաքրման գժով բնակչությանը, Արցախի^{*25)} Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքներին, ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին, համատիրություններին, բազմաբնակարան շենքի սպասարկում (կառավարում) իրականացնող անձանց^{*7)} մատուցվող ծառայությունների (գործարքների), ինչպես նաև «Գնումների մասին» Լեռնային Դարարադի Հանրապետության օրենքին համապատասխան^{*7)} պետական գնումների շրջանակներում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման, իսկ մինչև 2012 թվականի հունվարի 1-ը՝ ոռոգման ջրի մատակարարման^{*12)} գժով շահութահարկի վճարման ժամկետը հետաձգվում է մինչև դրանց իրացման դիմաց վճարման հաշվետու ժամանակաշրջանը:^{*4)}

Հոդված 40. Առանձին օրենքներով հարկային արտոնությունների սահմանումը

Օրենքով կարող են սահմանվել շահութահարկից ազատելու և Արցախի^{*25)} Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ արտոնություններ:

ԳԼՈՒԽ VII

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱԾՎԱՌՈՒՄԸ

Հոդված 41. Հաշվեգրման եղանակով հաշվառումը

Հարկավոր օբյեկտը որոշելիս եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով:

Հաշվեգրման եղանակով հաշվառման դեպքում հարկատուն եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ համապատասխանաբար ելնելով հարկատուի կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ծանաչելու պահից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

Հոդված 42. Հաշվեգրման եղանակով եկամուտների հաշվառման առանձնահատկությունները

Հաշվեգրման եղանակով եկամուտները հաշվառելիս հարկատուն հաշվի է առնում հետևյալ առանձնահատկությունները՝

ա/ Եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված, եթե համապատասխան գումարը ենթակա է հարկատուին անվերապահ վճարման (հատուցման), կամ հարկատուն կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է, կամ վճարումները իրականացվում են մաս-մաս.

բ/ հարկատուի կողմից ծառայություններ մատուցվելու դեպքում նշված իրավունքը համարվում է ձեռք բերված՝ գործարքից բխող ծառայությունների մատուցումն ավարտելու (այդ թվում նաև՝ ըստ փուլերի) պահից.

գ/ Սուլուսների տեսքով կամ գույքը վարձակալության տալու դիմաց եկամուտներ ստանալու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված՝ պարտքի կամ վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալու պահից: Եթե պարտքի կամ վարձակալության պայմանագրի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա հաշվետու ժամանակաշրջաններում եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան.

դ/ շահաբաժնների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված բաժնետերերի (փայտատերերի) ժողովի կողմից հաշվետու տարկա գործունեության արդյունքներով ստացված շահույթից շահաբաժնների բաշխման մասին որոշման ընդունման օրը.

ե/ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառուց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի օտարության եկամուտը հաշվարկվում է դրամց համար գույքահարկով և հողի հարկով հարկման բազայից (հարկվող օբյեկտից) ոչ պակաս չափով: Այդ չափից պակաս հասուցման (առանց ավելացված արժեքի հարկի) դեպքում գույքահարկով և հողի հարկով հարկման բազայի (հարկվող օբյեկտի) և փաստացի հատուցման գումարի (առանց ավելացված արժեքի հարկի) դրական տարբերությունը՝ որպես ներված պարտավորություն, գործարքի կատարման օրը ներառվում է նոր սեփականատիրոջ եկամուտների մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարության վրա հաշվառման մասին որոշումը գույքահարկով չ անհատ ծերնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ, որի դեպքում նոր սեփականատիրոջ մոտ ներված պարտավորություն չի առաջանում.

գ/ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառուց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի վարձակալության կամ անհատուց օգտագործման հանձնելու գործարքների մասով եկամուտը հաշվարկվում է դրամց համար գույքահարկով և հողի հարկով հարկման բազայի (հարկվող օբյեկտի), իսկ

որա բացակայության դեպքում՝ գույքահարկով և հողի հարկով հարկվող օրյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված մակերեսի տեսակարար կշռին համապատասխանող հարկման բազայի (հարկվող օրյեկտի) հինգ տոկոսից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով։ Այդ չափից պակաս հասուցման (առանց ավելացված արժեքի հարկի) դեպքում գույքահարկով և հողի հարկով հարկման բազայի (հարկվող օրյեկտի), իսկ որևէ բացակայության դեպքում՝ գույքահարկով և հողի հարկով հարկման օրյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված մակերեսի տեսակարար կշռին համապատասխանող հարկման բազայի (հարկվող օրյեկտի) հինգ տոկոսի և փաստացի վարձակալական վճարի (առանց ավելացված արժեքի հարկի) դրական տարբերությունը որպես ներված պարտավորություն, սույն հոդվածի գել կետով սահմանված պահին ներառվում է վարձակալի կամ փոխառուի եկամուտների մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ վարձատուն կամ փոխառուն հանդիսանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անծ, որի դեպքում վարձակալի կամ փոխառուի մոտ ներված պարտավորություն չի առաջանում։

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սույն կետով սահմանված գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու և (կամ) այդ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը դադարեցվելու դեպքում այդ հաշվետու ժամանակաշրջանում նշված գործարքների մասով եկամուտը հաշվարկվում է որպես սույն կետի առաջին պարբերությամբ որոշված եկամտի և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու օրերի հաշվետու ժամանակաշրջանում ներառվող օրերի մեջ ունեցած տեսակարար կշռի արտադրյալ։

Սույն կետի դրույթները չեն կիրառվում, եթե սույն կետով սահմանված գույքային միավորների օտարման կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործադրի կողմ է համարվում պետությամբ կատարվում է այլ կազմակերպության միջոցով։

Է/ Եթե Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ապրանքատեսակների մատակարարման գործարքների մասով ապրանքի մատակարարման դիմաց հասուցման ենթակա գումարը, կնքված պայմանագրի համաձայն, ենթակա է ծշտման՝ ծշգրտվող տվյալների (ապրանքի վերջնական քանակի, որակական հատկանիշների) հիման վրա՝ ապրանքն ստանալուց կամ որևէ վերամշակումն ավարտելուց հետո, ապա այդ ապրանքի մատակարարման դեպքում եկամուտը որոշվում է օտարերկրյա բրոսայի կամ հանդեսի կողմից իրավարակվող տվյալներով որոշվող՝ ապրանքի միավորի հաշվարկային գնի և տվյալ ապրանքի մատակարարման պայմանագրով նախատեսվող ծշգրտվող տվյալների (մասնավորապես՝ ապրանքի վերջնական քանակի, որակական հատկանիշների) հիման վրա (անկախ վերջնահաշվարկի արդյունքում վճարման ենթակա հասուցման գումարից): Սույն կետի կիրառության իմաստով՝

- եկամտի որոշման նպատակով ծշգրտվող տվյալները, որանց ծշգրտման առավելագույն սահմանները, ինչպես նաև ապրանքի միավորի հաշվարկային գնի որոշման կարգը (ներառյալ՝ հաշվարկային գնի որոշման պարբերականությունը) սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը.

- ապրանքի մատակարարման գործարքների դեպքում ապրանքի մատակարարման դիմաց եկամտի պվելացումը կամ պակասեցումը ներառվում է ապրանքի մատակարարման դիմաց եկամտի վերջնական գումարը հայտնի դաշնային օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող շահութահարկի հաշվարկում՝ որպես եկամտի պվելացում կամ պակասեցում։²⁵⁾

ԳԼՈՒԽ VIII

ՀԱՐԿԻ ՀԱԾՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Հոդված 43. Շահութահարկի գումարի որոշումը

1. Հարկատուները շահութահարկի գումարները որոշում են յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ սույն օրենքի V գլխով սահմանված դրույքաշիներով։

2. Շահութահարկի հաշվարկման նպատակով «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22 հոդվածով նախատեսված դեպքերում հարկային պետական վարչության մարմինն օգտվում է նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված իրավունքից։

Հոդված 44. Կենտրոնացված կարգով շահութահարկի վճարումը

Արցախի²⁵⁾ Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել այն ձեռնարկությունների ցանկը, որոնց թույլատրվում է շահութահարկի հաշվարկումը, հաշվարկների ներկայացումը և վճարումը կատարել կենտրոնացված կարգով։

Հոդված 45. Հահութահարկի հաշվարկի^{*12), *16)} ներկայացումը

1. Հահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային մարմնին յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը^{*17)}, ներկայացնում են հարկային մարմնի սահմանած ձևով շահութահարկի հաշվարկը: ^{*1), *12), *16)}

2. Հահութահարկի հաշվարկների ^{*12), *17)} ներկայացման ժամկետի մեջ ներառվում է նաև սույն հոդվածում նշված օրը, իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա ներկայացնելու ժամկետը տեղափոխվում է այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

3. Հահութահարկի հաշվարկ չեն լրացնում (և չեն ներկայացնում):

ա) գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ (հիմնականում) զբաղված հարկատուները, եթե հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների տեսակարար կշիռը համախառն եկամուտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը.

բ) ոչ առևտուային կազմակերպությունները, եթե ստացված միջոցները բացառապես սույն օրենքի 8-րդ - հոդվածի համաձայն եկամուտ չեն համարվում.

գ) միայն հաստատգրված վճարով և առևտուի հարկով^{*5)} հարկվող գործունեություն իրականացնող հարկատուները: ^{*3)}

Հոդված 45.1. Ոեզիդենտների շահութահարկի կանխավճարները

1. Տարվա ընթացքում հարկատուն պարտավոր է կատարել շահութահարկի կանխավճարներ սույն հոդվածով սահմանված կարգով:^{*1)}

Ընթացիկ տարում շահութահարկի նվազեցման (այդ թվում ժամկետային) արտոնությունից օգտվող հարկատունների համար սույն հոդվածով սահմանված կարգով որոշվող կանխավճարների մեծությունը նվազեցվում է տվյալ տարվա շահութահարկի (սույն օրենքի 38-րդ հոդվածով սահմանված դեպքում՝ նաև ներդրման ընդհանուր արժեքի նկատմամբ սահմանված չափը գերազանցող շահութահարկի)^{*12)} նվազեցման չափով (տոկոսով): Արտոնությունից օգտվելու ժամանակաշրջանում: Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից օգտվող հարկատունների համար հաշվարկված և հետաձգված շահութահարկի գումարներին հաճապատասխան կանխավճարների կատարումը հետաձգվում է մինչև նախորդ տարիներին վերաբերությունը գումարների ստացման հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ժամանակաշրջանը:^{*5)}

2. Կանխավճարների մուտքումները կատարվում են յուրաքանչյուր ամիս, նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծությամբ^{*14)} մեկ տասնվեցերորդի չափով՝ տվյալ ամսվա 20-ից^{*17)} (իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից) ոչ ուշ:

Բացառությամբ սույն հոդվածի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերի, ընթացիկ տարվա կանխավճարների հաշվարկման համար հիմք է հանդիսանում նախորդ տարվա հարկվող շահույթի նկատմամբ կիրարվող դրույքաչափով հաշվարկված շահութահարկի գումարի և սույն օրենքի 50-րդ հոդվածին համապատասխան՝ նախորդ տարում օտարերկրյա պետություններում ստացված եկամուտից վճարված շահութահարկի հաշվանցվող գումարների դրական տարբերությունը, ինչպես նաև նախորդ տարվա առևտուի հարկի և (կամ) հաստատգրված վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարները՝ հաշվի առնելով շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից օգտվող հարկատունների համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված առանձնահատկությունը:^{*5)}

Սահմանված ժամկետներում կանխավճարային մուտքումներ չկատարելու դեպքում հարկային պետական վարչության մարմններն այդ կանխավճարային գումարների և դրանց գծով հաշվարկված տույժերի վերաբերյալ պահանջներ են ներկայացնում օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Նոր հիմնարդված հարկատուն կարող է շահութահարկի կանխավճարներ չկատարել մինչև հաջորդ տարվա ապրիլի 20-ը^{*15), *17):}

4. Այն հարկատուն, որը՝

1) հարկային մարմին է ներկայացրել գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն, կարող է նշալ հայտարարությունը ներկայացնելուն հաջորդող ամսվանից մինչև գործունեությունը վերակենա ամսին ընկած ժամանակահատվածի համար շահութահարկի կանխավճարներ չկատարել.

2) նախորդ տարում հարկվող շահույթը չի ունեցել, կամ որի նախորդ տարվա շահութահարկի գումարը չի գերազանցել 100 000 ՀՀ դրամը, կարող է շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո շահութահարկի կանխավճարներ չկատարել: ^{*17), *22)}

5. Մինչև նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարի հաշվարկումը, հարկատուն շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարում է նախորդ տարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով:

Նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարները հայտնի դառնալուց հետո շահութահարկի հաշվարկի ներկայացնած հաջորդող առաջին կանխավճարային մուտքամբ ժամանակ կատարվում է մինչև հաշվարկի ներկայացնած տվյալ տարվա ընթացքում կատարված կանխավճարների գումարների ճշուում՝ տարվա սկզբից ամսությունը հաջորդող առաջին կանխավճարային մուտքամբ հաջորդությունը:^{*7)}

6. Նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող շահույթը պակաս նախատեսելու դեպքում

հարկատուն ամսական կանխավճարի մեջությունը որոշում է ինքնուրույն՝ ընթացիկ տարվա հուլիսի 1-ից ոչ ուշ՝¹⁹⁾ հարկային մարմիններին ներկայացնելով վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված ձևի հայտարարություն՝^{20), 21)} կանխավճարի տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի շահութահարկի 75 տոկոսից պակաս լինելու դեպքում հարկատուն վճարում է տույժ փաստացի ստացված շահութահարկի մեկ տասնվեցերորդի և տվյալ ամսական փաստացի կատարված կանխավճարի տարրերության գումարի նկատմամբ՝ կանխավճարի վճարման համար սույն օրենքի 45.1 հոդվածի 2-րդ կետով սահմանված օրվանից՝²²⁾ մինչև հարկային պետական վարչության մարմնին փաստացի շահութահարկի գումարը հայտնի դառնալու (շահութահարկի հաշվարկը ներկայացնելու) օրը: Հարկային մարմնի գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն ներկայացված լինելու դեպքում հայտարարությունը ներկայացնելուն հաջորդող ամսվանից մինչև գործունեությունը վերսկսելու ամսին ընկած ժամանակահատվածի համար տույժեր չեն հաշվարկվում:²³⁾

7. Հաշվետու տարվա ավարտից հետո հարկատուն, ենելով հաշվարկված հարկվող շահույթից, հաշվարկում է շահութահարկի գումարը՝ դրան հաշվանցելով տվյալ հաշվետու տարվա համար կատարված կանխավճարների գումարները:

8. Եթե հաշվետու տարվա փաստացի շահութահարկի գումարը պակաս է տվյալ տարվա համար կատարված կանխավճարների հանրագումարից, ապա դրանց տարրերությունը ենթակա է վերադարձման՝ «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 34 հոդվածի համաձայն: Այս դեպքում կանխավճարների գումարների նկատմամբ հաշվարկված տույժերի հաշվարկը դադարեցվում է հարկային պետական վարչության մարմնին փաստացի շահութահարկի գումարը հայտնի դառնալու (շահութահարկի հաշվարկը ներկայացնելու) օրը, բայց ապրիլի 20-ից²⁴⁾ ոչ ուշ՝ Կանխավճարների նկատմամբ հաշվարկված տույժերի գումարները վերահաշվարկման կամ վերադարձման ենթակա չեն:

9. Եթե կատարված կանխավճարների հանրագումարը պակաս է տվյալ հաշվետու տարվա փաստացի շահութահարկի գումարից, ապա վերահաշվարկ է կատարվում միայն շահութահարկի գծով, և հարկատուն պարտավոր է առաջացած տարրերությունը վճարել պետական բյուջե: Այս դեպքում կանխավճարների գծով տույժերի հաշվարկը դադարեցվում է հարկային պետական վարչության մարմնին փաստացի շահութահարկի գումարը հայտնի դառնալու (շահութահարկի հաշվարկը ներկայացնելու) օրը: Շահութահարկի գումարի վճարումն ուշացնելու համար տույժերի հաշվարկն սկսվում է ապրիլի 20-ից²⁵⁾: շահութահարկի գումարի չվճարված մասին նկատմամբ, «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 23 հոդվածով նախատեսված չափերով:²⁶⁾

Հոդված 46. Անվճարունակ ճանաչելու գործընթացում գտնվող հարկատուի կողմից շահութահարկի վճարման առանձնահատկությունները

1. Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց^{27), 28), 29)} անվճարունակությունը կարգավորող օրենսդրության համաձայն՝ բանկը (վարկային կազմակերպությունը, ապահովագրական ընկերությունը կամ արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձը^{27), 28), 29)} լուծարելու և լուծարային կառավարիչ նշանակելու մասին դատարանի որոշումն՝ ուժի մեջ մտնելու օրվանից հարկատու բանկը (վարկային կազմակերպությունը, ներդրումային ընկերությունը կամ ապահովագրական ընկերությունը)^{27), 28)} շահութահարկի վճարումները կատեցնում է մինչև պարտատերերի պահանջները բավարարելու վերաբերյալ օրենքով սահմանված հերթականությանը համապատասխան՝ պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթի հասնելը:

2. Կազմակերպությունների³⁰⁾ անվճարունակությունը կարգավորող օրենսդրության համաձայն՝ հարկատուին անվճարունակ ճանաչելու մասին դատարանի որոշումն՝ ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պարտատերերի պահանջները բավարարելու վերաբերյալ օրենքով սահմանված հերթականությանը համապատասխան՝ պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթի հասնելը:

Հոդված 47. Լուծարման գործընթացում գտնվող հարկատուի կողմից շահութահարկի վճարման առանձնահատկությունները

Առանց անվճարունակության ընթացակարգ անցնելու լուծարվող հարկատուի շահութահարկի վճարումները կատեցվում են լուծարման մասին դատարանի որոշումն՝ ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պարտատերերի պահանջները բավարարելու վերաբերյալ օրենքով սահմանված հերթականությանը համապատասխան՝ պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթի հասնելը:

Հոդված 48. Շահութահարկի գումարի վճարումը

Հարկատուն պարտավոր է շահութահարկի գումարը վճարել պետական բյուջե մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը²⁷⁾ ներառյալ:

Հոդված 49. Շահութահարկի հաշվարկների ճշտումը

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված շահութահարկի հաշվարկներում հարկատուի կողմից սխալներ հայտնաբերվելու դեպքում հարկատուն կարող է հարկային մարմիններին

օրենքով սահմանված դեպքերում ներկայացնել ճշտված հաշվարկ, որի հիման վրա օրենքով սահմանված կարգով կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ: ⁽¹⁶⁾

Հոդված 50. Օտարերկրյա պետություններում ստացված եկամտից վճարված շահութահարկի գումարի հաշվանցումը

Արցախի⁽²⁵⁾ Հանրապետությունում հարկատուի եկամտի գումարից գանձվող շահութահարկը նվազեցվում է շահութահարկի այն գումարի չափով, որը գանձվել է ռեզիդենտներից օտարերկրյա պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում, նվազեցվող շահութահարկի գումարը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված եկամտից՝ սույն օրենքին համապատասխան Արցախի⁽²⁵⁾ Հանրապետությունում վճարման ենթակա շահութահարկի գումարը:

Եթե սույն հոդվածի առաջին մասի համաձայն նվազեցման ենթակա գումարը գերազանցում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով առաջացած շահութահարկի պարտավորությունը, ապա գերազանցող գումարը նվազեցվում է հարկատուի հաջորդ տարիների շահութահարկի գումարից:⁽³⁾

Հոդված 50¹. Արցախի⁽²⁵⁾ Հանրապետության ռեզիդենտի հաշվետու տարվա շահութահարկի, իսկ օրենքով սահմանված դեպքերում և կարգով շահութահարկին փոխարինող առևտուի հարկ կամ հաստատագրված վճար վճարողների համար՝ առևտուի հարկի կամ հաստատագրված վճարի⁽¹⁶⁾ հաշվետու ամսվա գումարը նվազեցվում է առանձին խմբերի քաղաքացիներին օրենքով կամ օրենքով սահմանված դեպքերում Արցախի⁽²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած գեղչ սակագներով կամ անվճար մատուցված ծառայությունների հետևանքով չստացված եկամուտների գումարի չափով, բացառությամբ՝

ա) եթե հաշվետու տարվա պետական բյուջեի մասին Արցախի⁽²⁵⁾ Հանրապետության օրենքով տվյալ հարկ վճարողի համար նախատեսված է սուբյեկտի հատկացում.

բ) եթե տվյալ հարկ վճարողին այդ ծառայությունների մատուցման իրավունքը տրվել է համապատասխան լիցենզավորման կամ մրցույթի անցկացման կարգով և լիցենզիայի կամ մրցույթի պայմաններում նախատեսվել է, որ առանձին խմբերի քաղաքացիներին օրենքով կամ օրենքով սահմանված դեպքերում Արցախի⁽²⁵⁾ Հանրապետության կառավարության սահմանած գեղչ սակագներով կամ անվճար ծառայությունների մատուցման արդյունքում առաջացած վնասները փոխհատուցման ենթակա չեն.⁽⁶⁾

ԲԱԺԻՆ 2

ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏԻ ՀԱՐԿՈՒՄԸ

ԳԼՈՒԽ IX

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 51. Արցախի⁽²⁵⁾ Հանրապետության աղբյուրներից ստացված եկամուտները

1. Սույն օրենքի իմաստով՝ Արցախի⁽²⁵⁾ Հանրապետության աղբյուրներից ստացված եկամուտներ են համարվում՝

ա) Արցախի⁽²⁵⁾ Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները.

բ) ոչ ռեզիդենտից ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները.^{(16), (17)}

գ) Արցախի⁽²⁵⁾ Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտից ստացված այլ եկամուտները.^{(16), (17)}

դ) Արցախի⁽²⁵⁾ Հանրապետության տարածքից դուրս Արցախի⁽²⁵⁾ Հանրապետության ռեզիդենտից կամ այլ ոչ ռեզիդենտից՝ Արցախի⁽²⁵⁾ Հանրապետությունում հաշվարված առանձնացված ստորաբաժանմանը սույն հոդվածի 5-րդ մասում նշված ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները:⁽¹⁷⁾

2. Արցախի⁽²⁵⁾ Հանրապետության տարածքում ծերնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ են համարվում, մասնավորապես՝

ա) Արցախի⁽²⁵⁾ Հանրապետությունում արտադրանքի, ապրանքների իրացումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտը՝ անկախ վճարման վայրից.

բ) Արցախի⁽²⁵⁾ Հանրապետությունում միջնորդական գործունեությունից ստացված եկամուտը.

գ) կառավարման, ֆինանսական և ապահովագրական ծառայություններից ստացված եկամուտները, եթե դրանք համարվում են ծախս վճարող ստորաբաժանման կամ վայրի համար:

3. Պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից՝ իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմանք (տրամադրելով), Արցախի⁽²⁵⁾ Հանրապետության տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝

ա) շահաբաժնները.

բ) սուկոսները.

գ) ռոյալթիները.

դ) *Արցախի²⁵⁾* Հանրապետությունում գտնվող գույքը վարձակալության տալուց ստացած եկամուտը.

Ե) *Արցախի²⁵⁾* Հանրապետությունում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի և այլ ակտիվների հավելածը.

գ) այլ պասիվ եկամուտները:

4. Այլ եկամուտներ են համարվում սույն հոդվածի նախորդ կետերում չնշված եկամուտները, որոնք, մասնավորապես, ստացված են՝

ա) կառավարման ծառայությունների դիմաց.

բ) գույքը արդյունավետ օգտագործելու կամ տրամադրված իրավունքներից արդյունավետ օգտվելու համար անհրաժեշտ օգնություն ցույց տալու դիմաց.

զ) սարքավորումների, հոսքագետների, մեխանիզմների և հարմարանքների տեղակայման և շահագործման համար անհրաժեշտ օգնություն ցույց տալու դիմաց.

դ) ապահովագրության հետևանքով ստացված ապահովագրական վճարներից, եթե այլ բան չի նախատեսված *Արցախի²⁵⁾* Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև ապահովագրական հատուցումներից.

Ե) ցանկացած գիտական, արդյունաբերական կամ առևտրային նախագծի, պլանի, գործընթացի (պրոցեսի) կամ համատեղ ծեռնարկի դեկավարումն իրականացնելու հետ կապված խորհրդատվությունների, օգնության և այլ ծառայությունների դիմաց.

զ) օտարերկրյա ընկերության կողմից իր դուստր ծեռնարկությամբ նատուցված ծառայությունների և խորհրդատվությունների դիմաց կապված *Արցախի²⁵⁾* Հանրապետությունում վերջինիս ծավալած ծեռնարկատիրական գործունեության հետ, ինչպես նաև ոչ ռեգիստրատիվ գիտական կողմից նշանակված իրացման և ավելի ծեռնոտու գնի (որով միջնորդ ծեռնարկությունը փաստորեն իրականացրել է իրացման համար մատակարարված ապրանքի վաճառքը) տարբերությունը կամ տարբերության՝ ոչ ռեգիստրատիվ պատկանող մասը:

5. *Արցախի²⁵⁾* Հանրապետության տարածքից դուրս *Արցախի²⁵⁾* Հանրապետության ռեգիստրատիվ կամ այլ ոչ ռեգիստրատիվ՝ *Արցախի²⁵⁾* Հանրապետությունում իրացնելու դիմաց: Ընդ որում, այս դեպքում, *Արցախի²⁵⁾* Հանրապետության աղբյուրներից ստացված եկամուտ է համարվում ոչ ռեգիստրատիվ վճարված նրա կողմից նշանակված իրացման և ավելի ծեռնոտու գնի (որով միջնորդ ծեռնարկությունը փաստորեն իրականացրել է իրացման համար մատակարարված ապրանքի վաճառքը) տարբերությունը կամ տարբերության՝ ոչ ռեգիստրատիվ պատկանող մասը:

5. *Արցախի²⁵⁾* Հանրապետության տարածքից դուրս *Արցախի²⁵⁾* Հանրապետության ռեգիստրատիվ կամ այլ ոչ ռեգիստրատիվ՝ *Արցախի²⁵⁾* Հանրապետությունում հաշվառված առանձնացված ստորաբաժանմանը ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներ են համարվում խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, կառավարման, փորձագիտական, մարքեթինգային, գովագույն, թարգմանչական, ինժեներական և համանման այլ ծառայություններից ստացված եկամուտները:¹⁷⁾

Հոդված 52. Ոչ ռեգիստրատիվ ստորաբաժանմը և գործունեության վայրը

1. Ոչ ռեգիստրատիվ ստորաբաժանումը *Արցախի²⁵⁾* Հանրապետությունում պետական գրանցում ստացած ոչ ռեգիստրատիվ առանձնացված ստորաբաժանմունք:

2. Ոչ ռեգիստրատիվ գործունեության իրականացման վայրը *Արցախի²⁵⁾* Հանրապետությունում առանձնացված ստորաբաժանում չունեցող ոչ ռեգիստրատիվ ծեռնարկատիրական գործունեության իրականացման վաստակ վայրն է:

Վայր կարող են համարվել, մասնավորապես, ոչ ռեգիստրատիվ՝ *Արցախի²⁵⁾* Հանրապետությունում գտնվող գրասեմյակը, գործակալությունը, գործարանը, ֆարբիկան, արտադրամասը, հանքահողը, հանքավայրը, նավթի կամ գազի հորատանցքը, քարհանքը կամ բնական պաշարները հետախուզելու, արդյունահանելու և շահագործելու վայրը, պայմանագրով իրականացվող շինարարական, տեղակայման, մոնտաժային, կարգավորման, հավաքման, հետազոտման աշխատանքների, սարքավորումների սպասարկման, խորհրդատվական, այլ մասնագիտական ծառայություններ մատուցելու, այդ աշխատանքները վերահսկելու վայրը:

Չեռնարկատիրական գործակալի միջոցով գործունեություն իրականացնելու դեպքում ոչ ռեգիստրատիվ գործունեության իրականացման վայր է համարվում ծեռնարկատիրական գործակալի գտնվելու վայրը:

3. Չեռնարկատիրական գործակալ է ռեգիստրատիվ համարվող իրավաբանական անձը, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ծեռնարկությունը կամ ֆիզիկական անձը, որի գործունեությունը ոչ ռեգիստրատիվ կողմից վերահսկվում է հանձնարարության պայմանագրի, լիազորագրային կառավարման պայմանագրի կամ լիազորագրի հիման վրա կամ այլ ձևով, և որը ոչ ռեգիստրատիվ (լիազորող անձի) համար գործունեություն է իրականացնում, մասնավորապես, հետևյալ նպատակների համար:

ա) գնումներ կազմակերպելու, գնումներ կատարելու և այլ պայմանագրեր կնքելու.

բ) երրորդ անձանց հետ գործակալական պայմանագրային հարաբերություններ հաստատելու, լիազորող անձին պատկանող ապրանքներ կամնավոր ձևով կուտակելու, պահեստավորելու և լիազորող անձի անունից այլ անձանց այդպիսի ապրանքներ առաքելու.

գ) առևտրական պայմանագրեր կնքելիս կամ գնման պատվերներ կատարելիս լիազորող անձին ներկայացնելու:

ԳԼՈՒԽ X

ՈՉ ՌԵՋԻԴԵՆՏԻ ՀԱՐԿՎՈՂ ՇԱՀՈՒՅԹԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հոդված 53. Հարկվող օբյեկտի որոշման առանձնահատկությունները

1. Սույն օրենքի իմաստով արտաքին տնտեսական գործունեություն է համարվում՝

1) ոչ ռեզիլենտի կողմից ռեզիլենտ շահութահարկ վճարողին ապրանքի մատակարարումը, եթե այդ ապրանքի ներմուծման փաստաթղթերով (այդ թվում՝ ներմուծման հարկային հայտարարագրով կամ ներմուծման մաքսային հայտարարագրով) հիմնավորվում է, որ ներմուծումը կատարվել է ռեզիլենտ շահութահարկ վճարող ի ամսում՝ անկախ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքն Արցախի Հանրապետության տարածքում փոխանցվելու հանգամանքից;

2) սույն մասի 1-ին կետով սահմանված՝ ապրանքի մատակարարման գործարքի հետ ուղակիորեն կապված՝ ապրանքների փաթեթավորնան, բեռնան, տրանսպորտային, բեռնաթափման, ուղեկցման, ապահովագրության և համանամար այլ աշխատանքների կատարումը (կամ) ծառայությունների մատուցումը, եթե այդ աշխատանքները կատարվել և (կամ) ծառայությունները, ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն, մատուցվել են ապրանքը մատակարարու ոչ ռեզիլենտի կողմից.

3) ոչ ռեզիլենտ շահութահարկ վճարողի կողմից Արցախի Հանրապետության տարածքից դուրս ռեզիլենտին կամ մշտական հաստատության միջոցով Արցախի Հանրապետությունում գործունեություն իրականացնող այլ ոչ ռեզիլենտ շահութահարկ վճարողին ապրանքի մատակարարումը:²⁵⁾

2. Ոչ ռեզիլենտի՝ արտաքին տնտեսական գործունեությունից ստացած եկամուտը հարկման ենթակա չէ:

3. Եթե ոչ ռեզիլենտի և այլ անձի միջև ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են նույնանման գործարքներում սովորաբար առկա պայմաններից, ապա ցանկացած եկամտի նկատմամբ, որը կարող էր հաշվեգրել եկամուտները վճարող անձը, բայց ստեղծված պայմանների պատճառով չի հաշվեգրել, հարկային մարմինները կարող են իրականացնել հարկային ճշգրտում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Եթե ոչ ռեզիլենտն իր գործունեությունն իրականացնում է ոչ միայն Արցախի²⁵⁾ Հանրապետությունում, այլև՝ նրա սահմաններից դուրս, չվարելով առանձնացված հաշվառում, ինչը թույլ չի տալիս որոշել ստորաբաժանման կամ վայրի միջոցով իրականացված գործունեությունից առաջացած հարկվող շահույթը, ապա այն կարող է որոշվել հաշվարկի հիման վրա՝ հարկատուի և հարկային պետական վարչության մարմինի միջև համաձայնեցված եղանակով: Հանրապետության մարման հիմք է ծառայում հարկվող շահույթը որոշելիս, բայց դեռ չկա դրա փոփոխման համար բավարար ծանրակշիռ պատճառ:

5. Արցախի²⁵⁾ Հանրապետությունում ստորաբաժանման կամ վայրի գործունեությունից ստացված հարկվող շահույթը կարող է որոշվել ոչ ռեզիլենտին համընդիանութ գործունեության հասույթում Արցախի²⁵⁾ Հանրապետությունում գործունեությունից ստացված ապրանքների (ծառայությունների) իրացումից ընդհանուր հասույթի տեսակարար կշռով, ինչպես նաև ոչ ռեզիլենտի համընդիանութ ծախսերում Արցախի²⁵⁾ Հանրապետությունում իրականացված գործունեության հետ կապված ծախսերի տեսակարար կշռով կամ ոչ ռեզիլենտի համընդիանութ անձնակազմում Արցախի²⁵⁾ Հանրապետությունում գրաղված անձնակազմի տեսակարար կշռով:

6. Հահութահարկի հաշվարկման նպատակով, «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22 հոդվածով նախատեսված դեպքերում, հարկային պետական վարչության մարմինն օգտվում է նոյն հոդվածի երկրորդ մասով սահմանված իրավունքից:

Հոդված 54. Համախառն եկամտի նվազեցումը

1. Ստորաբաժանման կամ վայրի հարկվող շահույթը որոշելիս թույլատրվում է ոչ ռեզիլենտի կողմից Արցախի²⁵⁾ Հանրապետությունում իր ստորաբաժանման կամ վայրի նպատակների համար կատարված ծախսերի, Արցախի²⁵⁾ Հանրապետությունում իրականացվող գործունեության կապակցությամբ կրած կորուսների չափով նվազեցում՝ սույն օրենքով սահմանված կարգով ներկայացված տարեկան եկամուտների մասին հաշվարկի¹⁵⁾ հիման վրա: Ընդ որում, թույլատրվում է փաստաթղթերով հիմնավորված ծախսերի և փաստացի կորուսների բաշխում ոչ ռեզիլենտի և Արցախի²⁵⁾ Հանրապետությունում նրա ստորաբաժանման կամ վայրի միջև: Բաշխված ծախսերը ներառում են, մասնավորապես, կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը՝ կատարված ինչպես Արցախի²⁵⁾ Հանրապետությունում, այնպես էլ՝ նրա սահմաններից դուրս:

2. Ստորաբաժանման հարկվող շահույթը որոշելիս նրա համախառն եկամուտը նվազեցվում է նաև սույն օրենքով սահմանված այլ նվազեցումների չափով, բացառությամբ սույն օրենքի 24, 25 և 26 հոդվածներով սահմանվածների:

3. Հարկային պետական վարչության մարմինը Արցախի²⁵⁾ Հանրապետության աղբյուրներից ոչ ռեզիլենտի ստացած եկամուտները կարող է համարել որպես Արցախի²⁵⁾ Հանրապետությունում վայրի միջոցով

ոչ ռեգիստրացիայի կողմից հրականացված ձեռնարկատիրական գործունեության արդյունք՝ հարկային պետական վարչության մարմիններ այդ ոչ ռեգիստրացիայի կողմից ձեռնարկատիրական գործունեությունը հավաստող փաստաթղթեր ներկայացվելու դեպքում:

ԳԼՈՒԽ XI ՈՉ ՌԵՋԻՍՏՐԱՑԻ ՇԱՀՈՒԹԱԿԱՐԿԻ ՀԱԾՎԱՐԿՄԱՆ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Հոդված 55. Ոչ ռեգիստրացիայի շահութակարկի դրույթաչափերը

1. *Արցախի²⁵⁾* Հանրապետությունում ոչ ռեգիստրացիայի կողմից *Արցախի²⁵⁾* ի Հանրապետության աղբյուր-ներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրից: *Արցախի²⁵⁾* Հանրապետության աղբյուրներից ոչ ռեգիստրացիայի ստացած եկամտից վճարման աղբյուրի մոտ սույն օրենքի 62 հոդվածում սահմանված կարգով հարկային գործակալները շահութակարկը պահում (գանձում) են հետևյալ չափերով.

Եկամտի տեսակը	Շահութակարկի չափը տոկոսներով
ապահովագրական հատուցումներ, վերաապահովագրական վճարներ և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ	4 *7), *16)
շահաբաժններ, սովորական՝ ³⁾ ռոյալիներ, գույքը վարձակալության տարածքից դուրս արժեքի հավելած և այլ պափկ եկամուտներ (բացի փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից) ^{*17)}	6 *3), *7), *16)
ոչ ռեգիստրացիայի ստացած այլ եկամուտներ, ինչպես նաև <i>Արցախի²⁵⁾</i> Հանրապետության տարածքից դուրս <i>Արցախի²⁵⁾</i> Հանրապետության ռեգիստրացիայի կամ այլ ոչ ռեգիստրացիայի Արցախի ²⁵⁾ Հանրապետությունում հաշվառված առանձնացված ստորաբաժանմանը մասուցվող ծառայությունների դիմաց ստացված եկամուտներ	10 *17)

^{3), *11)} (*Հանգել է*) ^{*14)}

Հարկ վճարողների կողմից օֆշորային գոտիներում գրանցված (հաշվառված) կազմակերպություններից ապրանքների կամ հիմնական միջոցների ձեռքբերման համար այդ գոտիներում գրանցված (հաշվառված) կազմակերպություններին կատարված կանխավճարների դիմաց արդյունքը կանխավճարի կատարման օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում չստացվելու դեպքում կատարված կանխավճարների նկատմամբ շահութակարկը հաշվարկվում է տասը սովորական դրույթաչափով^{*16)}: Օֆշորային գոտիների (երկրների) ցանկը սահմանում է *Արցախի²⁵⁾* Հանրապետությունը:^{*15)}

2. Հարկային գործակալի նշված չափերով պահած (գանձած) գումարները համարվում են *Արցախի²⁵⁾* Հանրապետությունում ոչ ռեգիստրացիայի վճարած շահութակարկի վերջնական գումար, բացառությանք այն դեպքի, եթե ոչ ռեգիստրացիայի Արցախի²⁵⁾ Հանրապետությունում գործունեություն է իրականացնում ստորաբաժանման կամ հարկային մարմնի կողմից ճանաչված վայրի միջոցով, և այդ եկամուտը ստորաբաժանման կամ վայրի գործունեության արդյունք է:

3. Եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկի պահման (գանձման) հնարավորության բացակայության (այսինքն՝ հարկային գործակալի բացակայության) դեպքում *Արցախի²⁵⁾* Հանրապետության պետական բյուջե շահութակարկի վճարման պարտավորությունը կրում է *Արցախի²⁵⁾* Հանրապետության աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեգիստրացիայի սույն օրենքի 58-61-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ հիմնվելով սույն հոդվածի 1-ին մասում նշված դրույթաչափերի վրա^{*14)}.^{*4)}

Հոդված 56. Աղբյուրի մոտ շահութակարկի պահումից ազատվելը

Եթե *Արցախի²⁵⁾* Հանրապետության աղբյուրներից ոչ ռեգիստրացիայի վճարվող եկամուտները ստորաբաժանման գործունեության արդյունք են, ապա ստորաբաժանման հարկային գործակալին ներկայացնում է *Արցախի²⁵⁾* Հանրապետության հարկային պետական վարչության համապատասխան մարմնում հաստատված տեղեկանք *Արցախի²⁵⁾* Հանրապետության հարկային պետական վարչության մարմններում հաշվառված լինելու և հարկատուի հաշվառման համար ունենալու մասին, և ազատվում է աղբյուրի մոտ շահութակարկի պահումից (գանձումից), բացի սույն օրենքով սահմանված դեպքերում շահաբաժնների վճարման հա-

մար աղբյուրի մոտ շահութահարկը պահելուց:

Հոդված 57. Ոչ ռեգիստրատիվ շահութահարկի կանխավճարները

Եթե ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեգիստրատիվ նախորդ տարվա շահութահարկի գումարը գերազանցում է 2 մլն դրամը, ապա ոչ ռեգիստրատիվ տարվա ընթացքում՝ կիսամյակը մեկ, կատարում է շահութահարկի կանխավճարների մուծումներ՝ նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի մեկ քառորդի չափով, հավասար բաժիններով, մինչև հաշվետու տարվա հուլիսի 1-ը և դեկտեմբերի 31-ը:

Հոդված 58. Տարեկան եկամուտների մասին հաշվարկը^{*15)}

1. Ոչ ռեգիստրատիվ տարվամ հաջորդող ապրիլի 20-ից^{*17)} ոչ ուշ հարկային մարմիններ է ներկայացնում վերալսա հարկային մարմնի կողմից հաստատված ձևով տարեկան եկամուտների մասին հաշվարկ, որտեղ ներառվում են արցախյան^{*25)} աղբյուրներից ստացված բոլոր եկամուտները:^{*7), *15)}

2. Մինչև օրացուցային տարին ավարտվելը ոչ ռեգիստրատիվ գործունեության դադարեցման դեպքում նշված փաստաթղթերը պետք է ներկայացված լինեն գործունեության դադարեցման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում:

Հոդված 59. Ոչ ռեգիստրատիվ կողմից շահութահարկի հաշվարկումը

1. Արցախի^{*25)} Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր ունեցող ոչ ռեգիստրատիվ շահութահարկի հաշվարկը կատարում է ինքնուրույն, որն արտացոլում է տարեկան եկամուտների մասին հաշվարկում՝ հաշվի առնելով սույն օրենքի դրույթները և հիմնվելով 32-րդ հոդվածում նշված դրույթափակերի վրա:

2. Վճարման ենթակա շահութահարկի չափը հաշվետու տարում որոշվում է որպես գործունեությունից ստացված տարեկան շահութահարկի և կիսամյակային կանխավճարների գումարի (սահմանված դեպքերում նաև Արցախի^{*25)} Հանրապետությունում պահպատ շահութահարկի գումարների) տարբերություն:

3. Ոչ ռեգիստրատիվ նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված տարեկան եկամուտների մասին հաշվարկում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող է հարկային մարմիններ ներկայացնել տարեկան եկամուտների մասին ճշտված հաշվարկ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ:^{*15)}

Հոդված 60. (ուժը կորցրած է ճանաչվել)^{*15)}

Հոդված 61. Վերջնահաշվարկը

Սահմանված կարգով հաշվարկների (վերջնահաշվարկի) իրականացումից հետո պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահութահարկը վճարվում է, կամ գերազարձ հաստուցվում է մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը^{*17)} (ներառյալ՝ Արցախի^{*25)} Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:^{*15)}

Հոդված 62. Աղբյուրի մոտ շահութահարկի պահումը

1. Սույն օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝ աղբյուրի մոտ շահութահարկի պահումը (գամծումը) իրականացնում է հարկային գործակալը՝ ոչ ռեգիստրատիվ վճարվող (ներառյալ՝ կանխիկ կամ անկանխիկ փողային վճարման, այդ թվում՝ մաս-մաս կատարված վճարման՝ անկախ եկամուտ ստացման իրավունքը ծագած լինելու հանգամանքից, այլ գույքով հաստուցման, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվանցման, պարտքերի վերածնակերպման կամ պարտքերի նորացման, ինչպես նաև արցախյան աղբյուրներից ստացման ենթակա եկամուտների մասով հարկային գործակալի նկատմամբ ոչ ռեգիստրատիվ կողմից հարկային գործակալ չհանդիսացող անծին պահանջի իրավունքի գիշման, եկամուտ ստացման պահանջի ներման, սույն օրենքի 42-րդ հոդվածի՝ ոե կետով սահմանված՝ շահաբաժնների բաշխման մասին որոշման ընդունման դեպքերում) եկամուտի ընդհանուր գումարից:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ կանխիկ կամ անկանխիկ փողային վճարումները, համապատասխան գործարքը չկատարվելու հանգամանքով պայմանավորված, վերադարձվում են՝

1) մինչև այդ վճարումների կատարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային գործակալի կողմից սույն օրենքի 64-րդ հոդվածով սահմանված՝ նախորդ հաշվետու եռամսյակում ոչ ռեգիստրատ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահպատ և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկի փաստացի ներկայացումը, բայց ոչ ուշ քան այդ հաշվարկի ներկայացնական համար սույն օրենքի 64-րդ հոդվածով սահմանված վերջնաժամկետը, ապա համարվում է, որ ոչ ռեգիստրատ շահութահարկ վճարողին եկամուտ չի վճարվել.

2) այդ վճարումների կատարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային գործակալի կողմից սույն օրենքի 64-րդ հոդվածով սահմանված՝ նախորդ հաշվետու եռամսյակում ոչ ռեգիստրատ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահպատ և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկի ներկայացումից

հետո, ապա հարկային գործակալը կարող է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով հարկային մարմին ներկայացնել ճշտված հաշվարկ:

Հոդված 63. Բնամթերային ձևով ստացվող եկամուտների վերահաշվարկը

Բնամթերային ձևով (այդ թվում փոխանակման գործարքների միջոցով) եկամուտներ վճարելու դեպքում հարկային գործակալը դրանք վերահաշվարկում է դրամով՝ Արցախի²⁵⁾ Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, և սահմանված ժամկետներում շահութահարկը վճարում է բյուջե:

Հոդված 64. Հարկային գործակալի պահած շահութահարկի գումարների վճարման և հաշվարկների ներկայացման ժամկետները

Սույն օրենքի 62 հոդվածի համաձայն պահված (զանձված) շահութահարկի գումարը հարկային գործակալը պարտավոր է ոչ ռեզիդենտին եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 20-ից¹⁴⁾ ոչ ոչ¹⁴⁾ վճարել բյուջե: Ընդ որում, հարկային գործակալը պարտավոր է եռամսյակը մեկ՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը¹⁴⁾, սահմանված ձևով ներկայացնել ամփոփ հաշվարկ (հաշվետվություն) իր գումարելու (հաշվառման) վայրի հարկային պետական վարչության մարմնին՝ անցած եռամսյակում ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների, պահված և բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին:

Հարկային գործակալը նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված ամփոփ հաշվարկներում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող է հարկային մարմիններ ներկայացնել ճշտված հաշվարկ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար շահութահարկի պարտավորության²²⁾ վերահաշվարկ:¹⁴⁾

Հոդված 65. Վճարված հարկերի մասին տեղեկանք տրամադրելը

Ոչ ռեզիդենտի դիմումի հիման վրա հարկային պետական վարչության մարմինը տալիս է համապատասխան տեղեկանք՝ սույն օրենքի համաձայն Արցախի²⁵⁾ Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած հարկերի մասին:

Նշված տեղեկանքում շահութահարկի գումարի մեջ մտցվում է նաև այն գումարը, որը պետք է վճարված լիներ Արցախի²⁵⁾ Հանրապետությունում, սակայն չի վճարվել՝ սույն օրենքով սահմանված հարկային արտոնություններից օգտվելու հետևանքով:

Հոդված 66. Հարկային ստուգումները

Հարկային պետական վարչության մարմիններն իրավունք ունեն ստուգել Արցախի²⁵⁾ Հանրապետությունում ստորաբաժանման կամ վայրի միջոցով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտների ֆինանսական, հաշվապահական և հարկային գործերը և ստուգել հարկային գործակալի կողմից շահութահարկը պահելու և այն բյուջե վճարելու ճշտությունը:

ԲԱԺԻՆ 3

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ XII

ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 67. Սույն օրենքը խախտելու համար վճարողների և դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվությունը

Սույն օրենքը խախտելու համար վճարողները և դրանց պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում Արցախի²⁵⁾ Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պարբերությունը ուժը կորցրած է ճանաչվել՝¹⁶⁾

Հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասը (առանց հաշվի առնելու նախորդ տարիներից փոխանցվող հարկային վնասի մեծությունը)²⁵⁾ ավել ցույց տալու դեպքում ռեզիդենտ հարկ վճարողից՝¹⁷⁾ զանձվում է սույնանք՝ ավել ցույց տված վնասի 10 տոկոսի չափով, իսկ սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված շահութահարկի 20 տոկոս դրույքաչփով հարկվող գործունեություն իրականացնող ռեզիդենտներից¹⁶⁾. ավել ցույց տված վնասի 20 տոկոսի չափով¹⁴⁾: Ուղիղենստները նշված ստուգանքը պետական բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:^{14), 16)}

Հոդված 68. Հարկային գործակալի պատասխանատվությունը

Սույն օրենքի դրույթների համաձայն՝ շահութահարկը աղբյուրի մոտ չպահելու (չգանձելու) դեպքում հարկային պարտավորությունը (և շահութահարկը սահմանված ժամկետներում բյուջե չվճարելու համար Արցախի²⁵⁾ Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերը կրում է հարկային գործակալը:

ԳԼՈՒԽ XIII

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՂՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 69. Օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը

Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Արցախի Հանրապետության հարկային մարմինը.²⁵⁾

Հոդված 70. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքի ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, իսկ նրա դրույթները կիրարկվում են 1999 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի՝ ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ձանաչել լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի 1992 թվականի օգոստոսի 28-ի «Զեւնարկությունների և կազմակերպությունների շահութահարկի մասին» թիվ 97 որոշումը:

3. Սույն օրենքի 33 հոդվածում նշված շահումներով խաղերի առումով՝ խաղատների (կազմնոների) կազմակերպման, դրամական շահումնով խաղային ավտոմատների շահագործման և համակարգչային խաղերի կազմակերպման մասով, ինչպես նաև Արցախի²⁵⁾ Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում գործում են Արցախի²⁵⁾ Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կիրարվող հաստատագրված վճարումները:

ԳԼՈՒԽ XIV

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՂՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 71. Արտոնությունների կիրառումը

1. Սույն օրենքի 25 հոդվածով սահմանված նվազեցումները կիրառվում են 1997 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած վնասների մասով:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող ժամկետային արտոնությունները շարունակվում են մինչև դրանց ժամկետի լրանալը:

3. Նոր ստեղծված ձեռնարկությունների համար մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ համապատասխան հարկային արտոնությունից օգտվելու դեպքում տվյալ հարկատուի համար սույն օրենքի 38 հոդվածով սահմանված արտոնության ժամկետը նվազեցվում է մինչև սույն օրենքի՝ ուժի մեջ մտնելը վերապահված արտոնության ժամկետի չափով:

Հոդված 72. Ամորտիզացիոն մասհանումների կիրառումը

1. Սույն օրենքի 12 հոդվածում նշված ամորտիզացիոն մասհանումների չափը 1998 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա հիմնական միջոցների նկատմամբ որոշելու համար 1998 թվականի հունվարի 1-ից հետո ամորտիզացիոն (մնացորդային) նվազագույն ժամկետը որոշվում է որպես չամորտիզացված արժեքի գործակի և սույն օրենքի 12 հոդվածի 2-րդ կետում նշված համապատասխան խմբի ամորտիզացիոն նվազագույն ժամկետի արտադրյալ:

$$\sigma = (U - U') \times d/U$$

Որտեղ՝

Ժն-ն մինչև 1998 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված հիմնական միջոցի ամորտիզացիոն (մնացորդային) նվազագույն ժամկետն է.

Ա-ն հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքն է 1998 թվականի հունվարի 1-ի դրությամբ.

Մ-ն հիմնական միջոցի մաշվածության գումարն է 1998 թվականի հունվարի 1-ի դրությամբ.

Ժ-ն սույն օրենքի 12 հոդվածում սահմանված հիմնական միջոցների խմբի ամորտիզացիոն նվազագույն ժամկետն է:

2. 1998 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերված հիմնական միջոցների համար ամորտիզացիոն ժամկետ են համարվում սույն օրենքի 12 հոդվածի 2-րդ կետում նշված ժամկետները:

3. Ամորտիզացիոն մասհանումների հաշվարկման նպատակով մինչև 1998 թվականի հուլիսի 1-ը ձեռք բերված հիմնական միջոցների սկզբնական արժեք է համարվում 1997 թվականի հուլիսի դրությամբ դրանց հաշվեկշռային արժեքը, իսկ շահութահարկի տարեկան հաշվարկ ներկայացնողների համար՝ 1997 թվականի

հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը՝ հաշվի արնելով սույն օրենքի 13 հոդվածի համաձայն հիմնական միջոցների արժեքի վրա կատարվող ավելացումները:

**ԵՇՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

15 փետրվարի 1999թ.

ք.Ստեփանակերտ

ՀՕ-47

**ԵՇՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ^{*16)}**

**«ԾԱՀՈՒԹԱՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԵՇՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Քաղվածք. սույն օրենքի 24-րդ հոդվածը, որը վերաբերում է «Ծահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 45.1-ին հոդվածին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 24.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2013 թվականի փաստացի շահութահարկի գումարների հայտնի դաշնալը, բայց ոչ ուշ, քան շահութահարկի հաշվարկի ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետի լրանալը, օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասում նշված ռեզիդենտ հարկ վճարողները շահութահարկի կամխավճարային մեծությունները կատարում են յուրաքանչյուր ամիս՝ նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության մեջ ութերորդի չափով, իսկ նոյն հոդվածի 2-րդ մասում նշված՝ վերապահովագրական ընկերությունները, ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձինք, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձինք, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության (վերամշակման), վառելիքաներգետիկ հումքի արդյունահանման և (կամ) արտադրության (վերամշակման) գործունեություն իրականացնող անձինք, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում (բացառությամբ տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման) լիցենզավորված գործունեություն իրականացնող անձինք՝ յուրաքանչյուր ամիս՝ նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության մեջ չորրորդի չափով:

**ԵՇՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ^{*17)}**

**«ԾԱՀՈՒԹԱՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԵՇՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Քաղվածք. սույն օրենքի 8-րդ հոդվածը, որը վերաբերում է «Ծահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 45.1-ին հոդվածին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 8.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետը կիրառվում է նաև այն դեպքերում, եթե գործունեություն շիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարությունը հարկային մարմին է ներկայացվել մինչև 2014 թվականի հունվարի 1-ը:

**ԵԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ²⁴⁾**

**«ՇԱՀՈՒԹԱՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԵԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Քաղվածք սույն օրենքի 2-րդ հոդվածը, որը վերաբերում է «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածին, ինարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետով սահմանված դրույթը տարածվում է նաև մինչև սույն օրենքի ուժի մտնելը Օրենքի 38-րդ հոդվածով սահմանված արտոնությունից օգտված և օգտվող կազմակերպությունների վրա:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ²⁵⁾**

**«ՇԱՀՈՒԹԱՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԵԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 15.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

2. Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված (կառուցված, մշակված) և շահագործման համանված այլ հիմնական միջոցների 2018 թվականի հունվարի 1-ի դրույթամբ մնացորդային ամորտիզացոն ժամանակահատվածները սույն օրենքի ընդունումից հետո համարվում են համապատասխան հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետներ:

3. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետը տարածվում է 2017 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների վրա:

4. Օրենքի 42-րդ հոդվածի «դ» կետը և Օրենքի 62-րդ հոդվածը՝ ոչ ռեգիստրացիա ստացած շահաբաժնների մասով:

*1) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (31.12.99 <Օ-91>) խմբագրությամբ:

*2) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (21.11.00 <Օ-116>) խմբագրությամբ:

*3) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (20.06.01 <Օ-153>) խմբագրությամբ:

*4) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (06.02.02 <Օ-189>) խմբագրությամբ:

*5) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (26.02.03 <Օ-34>) խմբագրությամբ:

*6) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (17.12.03 <Օ-89>) խմբագրությամբ:

*7) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (22.12.04 <Օ-166>) խմբագրությամբ:

*8) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (14.09.05 <Օ-216>) խմբագրությամբ:

*9) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (22.03.06 <Օ-273>) խմբագրությամբ:

*10) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (19.12.07 <Օ-105>) խմբագրությամբ:

*11) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (17.09.08 <Օ-51-Ն>) խմբագրությամբ:

*12) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (29.12.08 <Օ-80-Ն>) խմբագրությամբ:

*13) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (24.06.09 <Օ-41-Ն>) խմբագրությամբ:

*14) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (16.12.10 <Օ-63-Ն>) խմբագրությամբ:

*15) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբադի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (27.12.11 <Օ-94-Ն>) խմբագրությամբ:

*16) «Հահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (26.12.12 <Օ-34-Ն>) խմբագրությամբ:

*17) «Հահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (18.12.13 <Օ-64-Ն>) խմբագրությամբ:

*18) «Հահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (26.12.13 <Օ-89-Ն>) խմբագրությամբ:

*19) «Հահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (18.12.14 <Օ-58-Ն>) խմբագրությամբ:

*20) «Հահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (30.09.15 <Օ-41-Ն>) խմբագրությամբ:

*21) «Հահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (26.11.15 <Օ-54-Ն>) խմբագրությամբ:

*22) «Հահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (23.12.15 <Օ-64-Ն>) խմբագրությամբ:

*23) «Հահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (30.06.16 <Օ-18-Ն>) խմբագրությամբ:

*24) «Հահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (29.09.16 <Օ-26-Ն>) խմբագրությամբ:

*25) «Հահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ օրենքի (21.12.17 <Օ-57-Ն>) խմբագրությամբ: